

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱԿԲՈՒ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»
«ԱԿԲՈՒ» ՍՊԸ
տնօրեն՝ Ն. Գաբրիելյան

«-----» ----- 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԳԵՏԻ ԱԾԽԱԹՎԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԹԻՎ 2ՔՅ ՀՈՐԱՏԱՆՑՔԻՑ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
/ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/

ք. Երևան
2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ ----- 4

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ----- 6

1.1. Նախատեսվող գործունեության, ենթակառուցվածքների համառոտ նկարագրությունը ----- 6

1.2. Նախագծմամ նորմատիվ-իրավական հիմքերը ----- 11

2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ----- 15

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ----- 22

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ----- 43

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ----- 47

5.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ ----- 47

5.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր (բնապահպանական կառավարման պլան) ----- 50

5.3. Հիդրոէկրաբանական մշտադիտարկումների (մոնիտորինգի) իրականացման պլան ----- 51

5.4. Սանիտարական պահպանության գոտի ----- 55

5.5. Ընդերքօտազործման թափոնների կառավարման պլան ----- 58

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ----- 60

7. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ (ԶՐՈՅԱԿԱՆ) ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ----- 66

8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ----- 67

9. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՎՐԱ ----- 69

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՌԻՍԿԵՐ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ ----- 70

11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ----- 73

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ ----- 74

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ----- 75

ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ ----- 77

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ _ ----- 80

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ----- 81

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նկար 1.	Լոռու մարզի ակնարկային քարտեզ: Մասշտաբ 1:500000	7
Նկար 2.	Իրավիճակային սխեմատիկ քարտեզ	8
Նկար 3.	Իրադրային հատակագիծ: Մասշտաբ 1:25000	9
Նկար 4.	Ձորագետի հանքավայրի տարածաշրջանի երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ	24
Նկար 5.	Ձորագետի հանքավայրի շրջանի լանջերի թեքության սխեմատիկ քարտեզ	25
Նկար 6.	ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ	26
Նկար 7.	Ձորագետի հանքավայրի շրջանի սողանքային մարմինների սխեմատիկ քարտեզ	27
Նկար 8.	Տաշիր գետի ավազանի մոնիթորինգի ցանց	28
Նկար 9.	Ձորագետի հանքավայրի շրջանի կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզ	30
Նկար 10.	Ձորագետի հանքավայրի շրջանի հողերի բնական տիպերի տարածման քարտեզ	34
Նկար 11.	Ձորագետի հանքավայրի շրջանի բուսականության տիպերի սխեմատիկ քարտեզ	36
Նկար 12.	Ձորագետի հանքավայրի շրջանի անտառային տարածքների սխեմատիկ քարտեզ	37
Նկար 13.	Մշտադիտարկման կետերի սխեմատիկ քարտեզ	54

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածո՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական

Ջրերի պահպանում՝ ջրերի աղտոտումը և հյուծումը կանխարգելող ու վերացնող միջոցառումներ

Մանիտարական պահպանման գոտի՝ բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ, կենցաղային սպասարկման, բուժիչ, կուրորտային և առողջարարական կարիքների պահանջների բավարարման նպատակով օգտագործվող ջրային ռեսուրսների պահպանման գոտի

Ստորերկրյա ջրեր՝ ջուր (արտեզյան, գրունտային, բնաղբյուր), որը գտնվում է երկրակեղևը կազմող ապարների մեջ հեղուկ կամ գոլորշի կամ կարծր վիճակում

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր՝ մինչև 1գ/լ հանքայնացմամբ ջրեր

Ստորերկրյա հանքային ջրեր՝ բարձր հանքայնացմամբ (1գ/լ-ից ավելի) ջրեր, որոնք պարունակում են առանձնահատուկ միկրոբաղադրիչներ: Հանքային ջրերը գլխավորապես օգտագործվում են առողջարանային բուժման համար և որպես սեղանի զովացուցիչ ջրեր

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության

հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանձոնների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության, ենթակառուցվածքների համառոտ նկարագրությունը

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի Սարատովկա գյուղի վարչական տարածքում՝ Տաշիր գետի կիրճում (տես նկար 1-3):

«ԱԿԲՈՒ» ՍՊԸ դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ստանալու ՀՀ Լոռու մարզի Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔԾ հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանման իրավունք՝ արդյունաբերական (շշալցման) նպատակով՝ 20 տարի ժամկետով:

Թիվ 2ՔԾ հորատանցքը գտնվում է Սարատովկա գյուղի հյուսիսային ծայրամասում, գյուղ տանող երկաթե կամուրջից 165.0մ դեպի հարավ-արևելք, Տաշիր գետի ձախ ափից մոտ 15.0մ հեռավորության վրա:

Հորատանցքի տեղագրական կոորդինատներն են՝

I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով	
X = 4549757	Y = 8442252	X = 4549750	Y = 8442150

Հորատանցքի աշխարհագրական կոորդինատներն են՝

- հյուսիսային լայնության - $41^{\circ} 4' 47.40''$
- արևելյան երկայնության - $44^{\circ} 18' 41.20''$

Հորատանցքի բացարձակ բարձրությունը կազմում է 1470.2մ:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 1.66 լ/վրկ կամ 52349.8 մ³/տարի: Ընկերությունը նպատակ ունի հանքային ջրի արդյունահանման իրավունք ստանալուց հետո (5 տարվա ընթացքում) ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքի Սարատովկա գյուղի վարչական տարածքում ձեռք բերել հողակտոր և կառուցել հանքային ջրի շշալցման գործարան իր ենթակառուցվածքներով: Այդ հարցի շուրջ ընկերությունը բանակցել է Տաշիր համայնքի և բնակավայրի ղեկավարների հետ, որոնք պատրաստակամություն է հայտնել ընկերությանը տրամադրել Ձորագետի հանքային ջրերի հանքավայրի թիվ 2ՔԾ հորատանցքի հարևանությամբ 0.6հա հողատարածք:

ՀՀ Լուռու Չորի մարզի Չորագետ ավազանի մասին համալրական տեղեկությունները



Նկար 2.

ԻՐԱԴՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ


ՀՀ Լոռու մարզի Չորագետի ածխաթվային հանքային
ջրի հանքավայրի թիվ 2ՔԾ հորատանցքի
(հատված K-38-1018-Դ-a, K-38-101-Դ-բ թերթերից)
Մասշտաբ 1:25000

Թիվ 2ՔԾ հորատանցքի կոորդինատներն են՝

Հորատանցքերի բացարձակ բարձ.-նը՝ 1470.2մ

I. СК-42 կոորդինատների համակարգով.
X= 4549757 Y=8442252

II. WGS-84 (ARMREF 02) կոորդինատների համակարգով.
X= 4549750 Y=8442150



«ԱԿՐՈՒ» ՄՊԸ-ի տնօրեն՝

Հ. Գաբրիելյան

Նկար 3.

Նախատեսվող գործարանի կառուցման, ժամանակակից սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերման և այլ անհրաժեշտ աշխատանքների համար նախնական նախատեսվում է կատարել 58 000 000 դրամ գումարի չափով ներդրում: Համայնքում ստեղծվելու է մոտ 10 աշխատատեղ՝ 200000 դրամ միջին աշխատավարձով: Բացի դրանից ընկերությունը պատրաստ է յուրաքանչյուր տարի ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքի կարիքների բավարարման համար: Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից (ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և այլն):

Մինչ 22ալցման գործարանի կառուցումը ընկերությունը պայմանագրային կարգով 22ալցման գործունեությունը կիրականացնի Երևան քաղաքում գտնվող՝ «Յունիոն» ՍՊԸ 22ալցման գործարանի տարածքում, որտեղ ընկերությունը կատարում է քաղցրահամ ջրի և ըմպելիքների 22ալցում (տե՛ս հավելված 3-6):

Հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքից դեպի 22ալցման գործարան հանքային ջրի տեղափոխումն կիրականացվի ԿԱՄԱԶ 53229 մակնիշի բեռնատար մեքենայով՝ կահավորված չժանգոտվող պողպատից պատրաստված 13.2տ տարողությամբ ցիստեռնով:

Գործարանը համալրված է իտալական, գերմանական, լեհական, ֆրանսիական, չինական և ռուսական առաջատար ընկերությունների նորագույն բարձրորակ սարքավորումներով

Գործարանում տեղադրված ժամանակակից սարքավորումների հզորությունները լիովին բավարարում են իրականացնել նաև հանքային ջրի 22ալցում:

Ներկայումս գործարանում 22ալցվում են PET տիպի պլաստիկ շշեր՝ 0.5 լիտր, 1.0 լիտր, 1.5 լիտր տարողունակությամբ, ինչպես նաև 0.33 լիտր ծավալով ապակե տարաներ:

Ընկերությունը համալրված է բազմափորձ մասնագետներով:

«ԱԿԲՈՒ» ՍՊ Ընկերությունն 22ալցված հանքային ջուրը իրացնելու է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ընկերությունը ստանալով Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունահանման իրավունքն և իրականացնելով այն կապահովի շուկայի պահանջարկը, կստեղծի նոր աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի Լոռու մարզի Տաշիրի համայնքի և Սարատովկա գյուղի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքերը

Շրջակա միջավայրը մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և իր վրա ազդեցության գնահատման կարիքն ունի:

Ձորագետի անխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

1. 2011թ. նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք, որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները: ՀՀ Ջրային օրենսգիրք, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

2. ՀՀ Ջրային օրենսգիրք (ընդունված 04.06.2002), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

3. ՀՀ Հողային օրենսգիրք (Ընդունված է 2001 թվականի մայիսի 2-ին), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

4. ՀՀ Անտառային օրենսգիրք /24.10.2005թ/ , որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

5. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 23.11.1999 թ.), որը սահմանում է պետական քաղաքանությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

6. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ընդունված 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքանությունը:

7. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որը կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

8. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

9. ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որով սահմանվում են խախտված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների:

10. ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի N 1267-Ն որոշում, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

11. ՀՀ կառավարության 22.11.2012թ.-ի N 1484-Ն որոշում, որը սահմանում է ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների իրականացումը, որը կապահովի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելը:

12. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ բնակչության

սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը:

13. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

14. ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

15. ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

16. ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

17. ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ.-ի «Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու և ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N94 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1480-Ն որոշում, որով հաստատվել է ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը:

18. ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:

19. ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:

20. ՀՀ կառավարության 14.08.2003թ.-ի N 1110-Ն որոշում, որով հաստատվել է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:

21. ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:
22. ՀՀ կառավարության 25.01.2005թ.-ի N 91-Ն որոշում, որով հաստատվել է մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:
23. ՀՀ կառավարության 25.01.2005թ.-ի N 92-Ն որոշում, որով հաստատվել է հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը:
24. ՀՀ կառավարության 24.12.2003թ.-ի N 1746-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները:
25. ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002թ.-ի N 803 հրաման, որով հաստատվել են «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N-2III.Ա2-2 սանիտարական կանոնները:
26. ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը,
27. ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
28. «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
29. ՀՀ կառավարության 10.01.2013 թ.-ի N 22-Ն որոշում, որով կարգավորվում են Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով սահմանված օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից մշտադիտարկումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

30. ՀՀ կառավարության 08.02.2018թ.-ի № 108-Ն որոշում, որով սահմանվել են բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

31. ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N 1396-Ն,

32. ՀՀ կառավարության 02.11.2012թ.-ի N 1404-Ն որոշում:

33. 25.10.2022թ.-ի շրջակա միջավայրի նախարարի N 369-Ն հրամանը:

2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի Մարատովկա գյուղի վարչական տարածքում:

Լոռու մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիսում, սահմանակից է հյուսիսից Վրաստանի Հանրապետությանը, արևմուտքից Շիրակի, արևելքից Տավուշի, հարավից Կոտայքի և Արագածոտնի մարզերին:

Լոռու մարզն ընդգրկում է Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանները, Վանաձոր Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Ախթալա, Թումանյան, Շամլուղ քաղաքները:

Մարզկենտրոնն է քաղաք Վանաձորը, որն առավել արագ զարգացել է 1950-ական թվականներից, երբ դարձավ արդյունաբերական կենտրոն:

Մարզի սոցիալ-տնտեսական բնութագիրը ներկայացվում է ստորև ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2020-2021թթ. պաշտոնական հրապարակումների:

Մարզի տարածքը կազմում է 3799կմ², մշտական բնակչությունը՝ 212.6հազ.մարդ, ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը՝ 7.2%, քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը՝ 59%, համայնքների քանակը՝ 56, քաղաքներ 8, գյուղեր 122: Մարզի քաղաքային բնակչությունը կազմել է 125.4հազ.մարդ, գյուղականը՝ 87.2հազ.մարդ: Լոռու մարզի պայմանական 10000 բնակիչ ունեցող համայնքի սոցիալական մի շարք բնութագրիչներ ներկայացված են ստորև, աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Ցուցանիշը	Ընդամենը	Նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
1	2	3	4
Բնակչությունը, մարդ	10000	5458	4542
Ծնվածներ, մարդ	122	60	62
Մահացածներ, մարդ	149	72	77
Ամուսնություններ	39		
Ամուսնալուծություններ	12		
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	43.2		
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ			
նախադպրոցական	272	186	86
հանրակրթական	1466	709	757

1			
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	122	84	38
նախնական մասնագիտական (արհեստագործական)	24	5	19
միջին մասնակցիտական	101	51	50
բարձրագույն մասնագիտական	119	74	45
Առողջապահության ոլորտ			
առողջապահության ոլորտ՝ հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	38372		
մարզիկներ, մարդ	179	26	153
Մոցիլական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	2026	1263	763
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	608		
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	10618		
թատրոն	405		
համերգ	130		
թանգարան	310		
Հանցագործության դեպքերի քանակը	84		

Մարզի աշխատանքային ռեսուրսները գնահատված են 208.7 հազ.մարդ, որից քաղաքային բնակչություն՝ 126.7հազ.մարդ, գյուղականը՝ 82.0հազ.մարդ:

Աշխատուժի առաջարկը գնահատված է 100.3հազ.մարդ, որից քաղաքային բնակչություն՝ 62.6հազ.մարդ, գյուղականը՝ 37.7հազ.մարդ: Մարզում հաշվառված են 20.0հազար գործազուրկներ, որից քաղաքային բնակչություն՝ 13.6հազ.մարդ, գյուղականը՝ 6.4հազ.մարդ:

Գյուղատնտեսության ոլորտում զբաղված են 13.4հազ.մարդ, ոչ գյուղատնտեսականում՝ 67.0հազ.մարդ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 87222.8մլն.դրամ: Հանրապետության արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում Լոռու մարզը ապահովել է 4.2%, այդ թվում. հանքագործական արդյունաբերություն՝ 326526.6 մլն.դրամ, մշակող արդյունաբերություն՝ 41904.2 մլն.դրամ, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի

արտադրություն և բաշխում՝ 8412.5 մլն.դրամ, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 1280.5 մլն.դրամ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների բաշխվել է հետևյալ կերպ.

Աղյուսակ 2.

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն.դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, 1մլն.դրամ	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
1	2	3	4
Ամբողջ արդյունաբերությունը	87222.8	87142.3	100.6
Այդ թվում՝			
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	35625.6	34341.9	5.1 անգամ
մետաղական հանքաքարերի արդյունահանում	35455.9	35179.3	5.1 անգամ
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	169.7	132.6	112.0
Մշակող արդյունաբերություն	41904.2	42107.4	59.5
սննդամթերքի արտադրություն	32506.5	34647.5	95.5
խմիչքների արտադրություն	178.1	178.1	91.0
հագուստի արտադրություն	7260.1	7247.1	100.1
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	403.1	399.0	119.0
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	657.7	733.3	73.4
հիմնային մետաղների արտադրություն	209.3	209.3	0.8

1	2	3	4
մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներած ուրիշ խմբավորումներում	355.4	330.0	67.1
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	8412.5	8412.5	93.7
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	1280.5	1280.5	102.5

Գյուղատնտեսության ոլորտում համախառն բուսաբուծական արտադրանքը կազմել է 21.6 մլն.դրամ, անասնաբուծականը՝ 46.9 մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկաբերող բերքի մշակաբույսերի ցանքաստարածությունը կազմել են 11540հա, միջին բերքատվությունը՝ 25.0ց/հա, խամախառն բերքը՝ 26.2հազ.տ:

Կարտոֆիլի ցանքաստարածությունը կազմել են 3432հա, միջին բերքատվությունը՝ 158.9/հա, խամախառն բերքը՝ 49.4հազ.տ: Բանջարանոցային մշակաբույսերի համար վերը նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1303հա, 114.9ց/հա և 15.0հազ.տ, բոստանային մշակաբույսերի համար՝ 9հա, 61.0ց/հա և 0.1հազ.տ, պտղի և հատապտղի տարածությունների դեպքում՝ 2315հա, 25.8ց/հա և 5.4հազ.տ:

Խաղողի տնկարկների տարածքությունները կազմել են 67հա, միջին բերքատվությունը՝ 15.6ց/հա, խամախառն բերքը՝ 0.1հազ.տ:

Խոշոր եղջրավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 72.8հազ.գլուխ, այդ թվում կովեր՝ 34.8 հազ.գլուխ, խոզեր 15.3հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 27.0հազ.գլուխ, ձիեր՝ 2.5հազ.գլուխ:

Իրականացվել է 3.2մլն.դրամի շինարարություն և 3.4մլն.դրամի շինմոնտաժային աշխատանքներ:

Փոխադրվել է 794.8հազ.տ բեռ, բեռնաշրջանառությունը կազմել է 12.0մլն.տ/կմ: Ինչպես նաև փոխադրվել է 5454.9հազ. ուղևոր, ուղևորաշրջանառությունը կազմել է 82.9մլն.ողևոր/կմ:

Ավտոմոբիլային տչանսպորտի ընդհանուր վազքն ըստ տևանսպորտի առանձին տեսակների կազմել է. բեռնատար ավտոմեքենաներ – 2277.6 հազ.կմ, ուղևորատար

ավտոբուսներ – 5527.0 հազ.կմ, թեթև մարդատար ավտոմեքենաներ – 3133.5 հազ.կմ, հատուկ ավտոմեքենաների վազք – 790.2 հազ.կմ:

Ավտոմոբիլային տրանսպորտի օգտագործված վառելիքն ըստ տեսակների բաշխվել է հետևյալ համամասնությամբ. բենզին – 280.9 հազ.լ, դիզելային վառելանյութ – 1467.7 հազ.լ, բնական սեղմված գազ – 1303.7 հազ.մ³:

Լոռին աչքի է ընկնում նաև հարուստ մշակութային ժառանգությամբ և պատմական անցյալով, որի մասին վկայում են տասնյակ վանքերը, բերդերը, ամրոցներն ու հուշակոթողները:

Լոռու մարզում են գտնվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Հաղպատի և Սանահինի վանքերը: Պատմական նշանակություն ունեն նաև մարզում գտնվող Լոռի բերդի փլատակները: Հայտնի են Օձունի վանքը, Սուրբ Հովհաննես վանքը Արդվիում, Կուրթանի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Ախթալայի եկեղեցին և ամրոցը,

Ալավերդու միջնադարյան կամուրջը և այլն:

Մարզի տարածքում հատնաբերվել են բազալտի, գաբրոսիտներ, ֆելզիտային տուֆի, տրավերտինի, ոսկու, հանքային ջրերի և այլ օգտակար հանածոների պաշարներ:

Տաշիրի տարածաշրջանն ունի 1 քաղաքային՝ Տաշիր և 23 գյուղ՝ Ապավեն, Արծնի, Բլագոդարնոյե, Գետավան, Գոգավան, Դաշտադեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Կրուզլայա Շիշկա, Ջյունաշող, Ձորմուտ, Մեղովկա, Մեծավան, Մեղվահովիտ, Միխայլովկա, Նովոսելցովո, Նորաշեն, Նորամուտ, Պաղաղբյուր, Պետրովկա, Պրիվոլնոյե, Սարատովկա, Սարչապետ:

Խոշորացված Տաշիր համայնքը ընդգրկում է Տաշիր քաղաքը և Բլագոդարնոյե, Դաշտադեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Մեղովկա, Կրուզլայա շիշկա, Մեղվահովիտ, Նորամուտ, Նովոսելցովո, Սարատովկա և Գետավան գյուղերը:

Համայնքով հոսում է Տաշիր գետը, որը հանդիսանում է Դեբետ գետի վտակ: Կլիման բարեխառն է, օդի հունվարյան միջին ջերմաստիճանը - 4,9 °C, հուլիսինը՝ 18-20 °C: Տարեկան թափվում են 420 մմ մթնոլորտային տեղումներ: Տաշիր համայնքի վարչական տարածքը 40359,04 հա է, հեռավորությունը մարզկենտրոնից 52.0 կմ է, հեռավորությունը մայրաքաղաքից 163.0 կմ: Տաշիր համայնքով է անցնում միջպետական նշանակության Երևան-Վանաձոր-Տաշիր-Վրաստան մայրուղին: Տաշիրը մարզի երկրորդ

այրնտարանաքային հնարավորությունն է Վրաստանի Հանրապետություն դուրս գալու համար:

Համայնքում գործում է 1 գրադարան, 1 արվեստի դպրոց, 3 նախադպրոցական հիմնարկ, 8 հանրակրթական դպրոց, 1 մարզադպրոց:

Հաշվի առնելով Տաշիրի տարածաշրջանի աշխարհագրական դիրքը և բարեխառն կլիման՝ տարածաշրջանի համայնքների զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա կարող է դրական ազդեցություն ունենալ տուրիզմի զարգացումը, ինչի համար անհրաժեշտ է զարգացնել ենթակառուցվածքները, մասնավորապես՝ նորոգել, վերակառուցել ճանապարհները, ստեղծել արդիական ժամանցի վայրեր, զարգացնել և խրախուսել հյուրանոցային բիզնեսը:

Տաշիր համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներն ու դժվարություններն են գործարար միջավայրի բացակայությունը, արտագաղթը, գործազրկությունը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների անմխիթար կամ վատ վիճակը, ֆինանսական միջոցների բացակայությունը, սպառման ապրանքների իրացման դժվարությունները, ակտիվ երիտասարդության պակասը:

Համայնքի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ գործարար միջավայր, դրանում ներգրավել նաև աշխատունակ սոցիալապես անապահով խավը, նպաստել համայնքի տարածքում զբոսաշրջության զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ զարկ տալով մանր և միջին բիզնեսի, գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացմանը:

Տաշիր քաղաքը (նախկինում Վորոնցովկա, Կալինինո) Տաշիր համայնքի կենտրոնն է: Եղել է նախկին Կալինինոյի շրջանի վարչական կենտրոնը: Բնակավայրը հիմնադրվել է 1844թ-ին՝ Ռուսական Կայսրության կառավարության կարգադրությամբ: 1961թ.-ից դարձել է քաղաքատիպական, իսկ 1983 թվականից՝ դասվել Հայաստանի քաղաքների շարքին: Տաշիր է վերանվանվել 1991 թվականին:

Հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքը գտնվում է Տաշիր խոշորացված համայնքի **Սարատովկա ազդակիր բնակավայրի վարչական տարածքում**, որտեղ բնակվում են 404 մարդ:

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 45.0 կմ, Տաշիր քաղաքից՝ 6.0 կմ, միջին բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1480 մ:

Գյուղի բնակչությունը կազմված է մոտ 119 ընտանիքներից (տնային տնտեսություններից): Բնակչության կազմում հիմնականում հայեր են:

Հիմնադրվել է 1910 թվականին՝ Եկատերինա երկրորդի կողմից արտրված ռուս մոլոկանների կողմից: Բոգդանով ազգանունով մեկը բնակություն է հաստատել տարածքում, զբաղվել անասնապահությամբ և այդ մասը անվանել են Բոգդանով խուտոր: Հետզհետե մարդիկ մոտակա գյուղերից եկել և բնակություն են հաստատել այդտեղ, որից հետո՝ գյուղը կոչվել է Սարատովկա: Գյուղի միջով անցնում է Տաշիր գետը: Գյուղի միջով անցնում է Երևան-Թբիլիսի մայրուղին: Կլիման բարեխառն լեռնային է, սևական, ցուրտ ձմեռներով: Արոտավայրերի և խոտհարքների առկայությունը նպաստավոր է անասնապահության զարգացման համար: Գյուղի մասնագիտացման հիմնական ուղղությունը անասնապահությունն է: Գյուղի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղ մտնող և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը

Գյուղի հողային ֆոնդը կազմում է 2223.39հա, այդ թվում՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1852.43 հա, որից՝ վարելահող՝ 397.8 հա, խոտհարք՝ 601.52 հա, արոտ՝ 682.48 հա, այլ հողատեսք՝ 170.63հա,
- բնակավայրերի հողեր՝ 65.05 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 26.91 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 70.25 հա,
- հատուկ պահպանվող հողեր՝ 1.71 հա,
- անտառային հողեր՝ 81.38 հա,
- ջրային հողեր՝ 125.66 հա:

3. ՇՐՋԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ընդհանուր տեղեկություններ. Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի Սարատովկա գյուղի վարչական տարածքում՝ Տաշիր գետի կիրճում, Տաշիր քաղաքից 5.0 կմ դեպի հարավ, հարավ-արևելք:

Տաշիր քաղաքն ասֆալտապատ ճանապարհով կապված է ինչպես հանրապետության մայրաքաղաք Երևանի, այնպես էլ Վրաստանի հարևան շրջանների հետ: Սոտակա Թումանյան երկաթգծի կայարանը գտնվում է 30.0կմ հեռավորության վրա:

Տաշիրի տարածաշրջանում բացի Սարատովկա գյուղից կան նաև 22 գյուղական բնակավայրեր և 1 քաղաք:

Տաշիրի տարածաշրջանում արդյունաբերությունը թույլ է զարգացած: Քաղաքում կենտրոնացված են հացի, կաթնամթերքների արտադրության, կենցաղսպասարկման օբյեկտները, կապի բաժանմունքը:

Վերելք է ապրում տեղական հումքի բազայի վրա շինանյութերի արտադրությունը (բազալտների, անդեզիտաբազալտների, գրանիտների վերամշակում):

Գյուղատնտեսության տեսակետից տարածաշրջանը բնութագրվում է որպես կաթնա-անասնապահական: Չարգացած է նաև կարտոֆիլագործությունը:

Բազմազան ու հարուստ են տարածաշրջանի օգտակար հանածոները: Մեծ արժեք են ներկայացնում ոսկու, բազմամետաղների, բազալտի, կրաքարի և այլ շինանյութերի, հանքային (Կաթնաղբյուրի, Ձորագետի) և քաղցրահամ (Լոռու սարահարթի) ջրերի հանքավայրերը:

Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն, արտածին երևույթներ, սելամիկ բնութագիր.

Ձորագետի հանքավայրի շրջանը հարում է Լոռվա բարձրադիր լեռնային սարահարթին (1400-1600մ), որը հարավից սահմանափակված է Բազումի (լ. Ուրասար 2992.0մ), արևմուտքից՝ Չավախքի (լ. Լեզլի 3157.0մ) և Վիրահայոց (լ. Լոք 2142.0մ), իսկ արևելյան կողմից Լեջանի (լ. Լեջան 2527.7մ) լեռնաշղթաներով:

Լոռվա սարահարթը բարձրադիր հարթավայր է, ունի եռանկյունու ձև, 30կմ երկարություն և 18 կմ լայնություն: Չզվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, ունի հարավ-արևելյան թույլ թեքություն, 1300-1600մ բարձրություն:

Կազմված է վերին պլիոցենի և անթրոպոգենի անդեզիտաբազալտներից և բազալտներից՝ ծածկված ջրասառցադաշտային, հեղեղատային նստվածքներով: Արևմուտքում մակերևույթը միատարր է, արևելքում՝ մասնատված Ձորագետի, Ուռուտի, Տաշիրի և Գարգառի խոր կիրճերով:

Ջավախքի հրաբխային լեռներից, Բագուլի լեռնաշղթային զուգահեռ սարահարթի հատակով ձգվում է լավային լեզվակ:

Վիրահայոց լեռների նախալեռնային հատվածի և սարահարթի միաձուլման վայրում 1000-1900մ բարձրություններում պահպանվել են միջին-վերին էոցենի հրաբխային առաջացումների միատարր համահարթեցման մակերևույթի հողմահարված մնացուկները: Դրանց միջանկյալ տարածությունները լցված են Վիրահայոց (Սոմխեթի) լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերը կտրող գետահովիտների այլովիալ-դելյուվիալ-պրոյուվիալ առաջացումներով: Բերվածքային առաջացումներով կազմված հարթավայրային հատվածով հոսող գետակներին բնորոշ է երկու դարավանդ՝ մինչև 1մ բարձրությամբ գետահովտայինը և 4-6մ բարձրությամբ առաջին դարավանդը:

Բագումի լեռները սկսվում են Խոնավ լեռների հարավային մասից՝ Քարախաչի լեռնանցքից և զուգահեռականի ուղղությամբ ձգվում դեպի արևմուտք՝ մինչև Գայլաձոր կիրճը, Ախուրյան գետի վերին հոսանքից մինչև Աղստև գետի միջին հոսանքը՝ շուրջ 90 կմ երկարությամբ և 15-20կմ լայնությամբ: Ամենաբարձր գագաթը Ուրասար լեռն է (2992 մ), միջին բարձրություն 2800մ: Լեռնաշղթան մասնատված է Փամբակ, Վահագնի, Ձորագետ, Չքնաղ, Գարգառ գետերի ու բազմաթիվ գետակների ձորերով:

Ջավախքի լեռները ձգվում են Վրաստանի միջօրեականի ուղղությամբ, կազմելով Աշոցքի և Լոռու սարահարթերի սահմանը, հասնում են մինչև Քարախաչի լեռնանցքը: Առավելագույն բարձրությունը ՀՀ տարածքում Աչքասար լեռն է (3169 մ) :


Վիրահայոց (Սոմխեթի) լեռները ձգվում են զուգահեռականի ուղղությամբ շուրջ 73 կմ: Առավելագույն բարձրությունը՝ Լավար լեռն է (2544 մ) : Վիրահայոց լեռները բաղկացած են խոր ձորերով և լայն գոգհովիտներով մասնատված Լոք, Լեջան և Լավար լեռնաբազուկներից: Ընդհանուր առմամբ այս լեռները կամարածալքային են, կամարի արևելյան հատվածը համընկնում է Ալավերդու անտիկլինորիումի հետ, իսկ արևմուտքում ռելիեֆի և տեկտոնիկայի հարաբերությունը հակադարձ է՝ առավել բարձր Լավարի զանգվածին համապատասխանում է Լավարի սինկլինորիումը: Լեռներին բնորոշ է էոզոկոն-դենուդացիոն ռելիեֆը :

Տարածաշրջանում են գտնվում Կրուզլայա Շիշկա (1734.4մ), Կիսիլյովա (1726մ),

Այդպիսով (անվանակոչված՝ Առյուծ) (1921մ) և Ուրբանցող (1847մ) բարձրունքները:


Հանքավայրի հիպոստորիկ բացարձակ նիշերը տատանվում են 1462.0-1490.0մ սահմաններում:

Շրջանի ծալքաբեկորային լեռների ձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 4 և 5-ում:



Նկար 4.

ՀԱՅՅԿՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԻՆՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Հարթավայրեր և մեղմաթեք հարթավայրեր՝ 0-9 աստիճան լանջերի թեքությամբ
- 2 - Մեղմաթեք և գառիկող լանջեր՝ 10-19 աստիճան լանջերի թեքությամբ


Նկար 5.

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացման մեծությունը կազմում է 0.4g (նկար 6):



Նկար 6.

Չորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի բուն տարածքում սողանքային մարմիններ չեն քարտեզագրվել: Ըստ Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) հանքավայրի շրջանում, Ուռուտ գյուղից արևելք, հորատանցքից ավելի քան 6.0 կմ հեռավորության վրա, քարտեզագրված են 101-0270 և 101-0280 սողանքային մարմինները (նկար 7):



Նկար 7.


Ջրային ռեսուրսներ. Հայցվող տարածքի շրջանում հիմնական մակերևութային ջրային միավորը Տաշիր գետն է:

Տաշիր գետը՝ Ձորագետի ձախափնյա վտակը, սկիզբ է առնում Վիրահայոց լեռնաշղթայի արևմտյան լանջերից (Վրաստան)՝ 1800 մ բարձրությունից: Երկարությունը 54 կմ է, ջրհավաք ավազանը՝ 470 կմ²: Վերին հոսանքում գետահովիտը V-աձև է, այնուհետև հոսում է Լոռու դաշտով, առաջացնում գետալորաններ: Մնումը հիմնականում ձնաանձրևային (76 %) է, վարարումը՝ մայիս-հունիսին: Տարեկան միջին ծախսը 2,52 մ³/վ է, հաճախ են աղետաբեր սելավները: Գարնանային հորդացումները սկսվում են ապրիլի կեսից և վերջանում հունիսի վերջին տասնօրյակում: Հայցվող տարածքով է հոսում մոտ 15կմ երկարությամբ Մեղրագետը, որը և Տաշիր քաղաքի հարավային մասում ձախից միախառնվում Տաշիր գետին: Հեռավորությունը հայցվող տարածքի և Տաշիր գետի միջև կազմում է 1.5-3.3կմ:

1958թ.-ին՝ Լոռու ջրանցքին Տաշիր գետով լրացուցիչ ջուր տալու նպատակով, շահագործման է հանձնվել Տաշիրի ջրանցքը: Այն սկիզբ է առնում Ձորագետի աջ ափից, անցնում Նովոսելցովո գյուղի հյուսիսով, ձգվում մինչև Սարատովկա գյուղ: Երկարությունը 54 կմ է, ջրթողունակությունը՝ 2մ³/վ: Ջրառը կատարվում է պատվարային եղանակով: Ռոտզում է 700 հա հողատարածք:

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է Տաշիր գետի ջրերի մոնիթորինգ՝ Միխայելովկա գյուղից վերև (դիտակետ 11) և Սարատովկա գյուղից ներքև (դիտակետ 12) ընկած հաստվածներում (նկար 8): Համաձայն «Հիդրոոլերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022 թվականի 4-րդ եռամսյակում կատարված դիտարկումների Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավանից վերև և գետաբերանի մոտ հաստվածներում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Նկար 8.

Հայցվող տարածքի շրջանը հարուստ է խորքային՝ արտեզյան ջրերով և աղբյուրներով: Լոռու սարահարթի ստորերկրյա ջրերի ավազանը գտնվում է Օձն³»-ի և Տաշիր գետերի վերին և միջին հոսանքներում: Տարածքը ներկայացված է ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով, որոնք ծածկում են լավային ապարների (բազալտներ, անդեզիտա-բազալտներ) հզոր շերտը:

Ստորգետնյա ջրերի սնուցման մարզի մակերեսը կազմում է մոտ 295 քառ.կմ:

Տաշիր քաղաքի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան մասերում գրունտային ջրերի մակարդակը բարձր է և տատանվում է 0-2 մետր:

Ստորերկրյա բոլոր ջրահոսքերի շարժումը սնման մարզից դեպի բեռնաթափման մարզ կատարվում է հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք: Գրունտային ջրերի հոսքը Տաշիր քաղաքի մոտակայքում բաժանվում է երեք ճյուղերի և լավային հոսքերի կոնտակտներով բեռնաթափվում է Ձորագետ և Տաշիր գետերի կիրճերում՝ աղբյուրների խմբի տեսքով

(Նովոսելցովոյի, Ակայուդինի և Կիզկալինի): Աղբյուրների հաստատված գումարային պաշարները կազմում են 1502.3 (504.6+345.0+652.7) լ/վրկ կամ 129.8 հազ.մ³/օր: Աղբյուրները վարընթաց տիպի են, ջրերը լավ որակի են, բավարարում են խմելու ջրի նորմերին և կապտաժային կառույցների միջոցով մատակարարում են բնակավայրերին: Երկարաժամկետ դիտարկումների արդյունքում պարզվել է, որ բնական պայմաններում աղբյուրների ջրադինամիկական ռեժիմի ցուցանիշները (ծախս, ջերմաստիճան, քիմիական կազմ, հանքայնացում և այլն) էական փոփոխությունների չեն ենթարկվում:

Գետերի ջրի որակը 2022 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
	Տաշիր	0.5 կմ գյ. Միխայելովկայից վերև (11)	Ամոնիում իոն, մանգան, երկաթ	3-րդ	3-րդ
	Տաշիր	0.5 կմ գյ. Մարատովկայից ներքև (12)	-	2-րդ	2-րդ

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված երկաթով և ալյումինով, Վանաձոր քաղաքից վերև՝ նիտրատ իոնով, ընդհանուր լուծված աղերով և կախության չոր նյութերով: Սպիտակ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով: Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:


Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և կախության չոր նյութերով: Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Այրում քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված մոլիբդենով, սահմանի մոտ՝ մոլիբդենով և կախության չոր նյութերով:

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Ստեփանավան քաղաքից վերև՝ պայմանավորված մանգանով, գետաբերանում՝ մանգանով և կախութային չոր նյութերով:

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և երկաթով: Սարատովկա գյուղից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Կլիմա. Հանքավայրի շրջանը գտնվում է բարեխառն կլիմայական գոտում (նկար 9): Բնութագրվում է չափավոր տաք ամառով, չափավոր ցուրտ ձմեռով, օդի խոնավության բարենպաստ չափերով, քամու բարենպաստ ռեժիմով:

Ձմեռը երկարատև է, կայուն ձյան շերտով: Ձմեռը, միջին տվյալներով, սկսվում է հոկտեմբերի վերջին և նոյեմբերի սկզբին և վերջանում է ապրիլի երկրորդ տասնօրյակում: Երբեմն ձևավորվում են «զգալի սառնամանիքներով» եղանակներ:



Նկար 8.

Ստորև ներկայացվում է «Շինարարական կլիմայաբանության ՀՀՇՆ 22-01-2024» (https://www.arlis.am/Annexes/7/2024_N03hav.pdf) նորացված նորմատիվային փաստաթղթում առկա «Տաշիր» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի արժեքներից (օդի միջին ջերմաստիճան, օդի հարաբերական խոնավություն, մթնոլորտային տեղումների, քամի) աղյուսակային տեսքով՝

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
27. Տաշիր	-4.6	-3.7	0.0	5.9	10.3	13.7	16.4	16.1	12.4	7.6	2.1	-2.3	6.2	-34.1	34.6

Աղյուսակ 3 Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ. ա. / մ. ն.	ըստ ամիսների, °C												ընդամենը
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
27. Տաշիր	մ. ա.	1.9	2.5	6.1	12.2	16.6	19.7	22.1	22.3	19.2	14.7	8.8	4.1	12.5
	մ. ն.	-10.2	-9.3	-5.4	0.2	4.5	7.5	10.5	9.8	6.1	1.6	-3.1	-7.8	0.4

Աղյուսակ 4 Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
27. Տաշիր	ա	16.0	17.3	23.3	26.1	29.3	30.4	34.6	33.7	32.2	28.4	22.5	19.1	34.6
	ն	-33.6	-31.5	-30.3	-19.4	-7.0	-4.5	0.1	-2.0	-8.2	-15.9	-27.4	-34.1	-34.1

27.Տաշիր	ա.մ.	8.6	9.7	14.2	20.2	23.2	25.2	27.4	27.7	26.2	22.8	17.0	11.5	28.8
	ն. մ.	-22.1	-21.1	-17.3	-7.8	-1.8	1.8	4.3	4.0	-0.7	-6.0	-13.0	-19.6	-25.3

Աղյուսակ 9 Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C)

(առավելագույնի միջինը՝ ա. մ., և նվազագույնի միջինը՝ ն. մ.)

Բնակավայրի անվանումը	ա.մ. / ն.մ.	ըստ ամիսների												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	

27.Տաշիր	70	71	73	73	76	77	77	75	77	76	74	71	74	70	58	77	63
----------	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ օրական առավելագույն _____ մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

27.Տաշիր	22	28	42	76	131	139	81	62	53	49	33	19	735	144	591
	26	46	33	36	116	88	61	54	35	40	33	29	116		

ՔԱՄԻ

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Միջին կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Փերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ				ըստ ուղղությունների									
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
34.Տաշիր	հունվար	19	3	2	4	10	32	19	11	38	3.2	ՀսԱրլ	2.4	ՀվԱրմ	5.1
		2.6	2.0	2.2	3.0	4.2	5.1	4.9	3.3						
	ապրիլ	35	10	4	5	8	16	7	15	37	2.1				
		2.7	2.6	2.3	2.5	2.9	4.0	3.4	2.8						
	հուլիս	45	23	5	2	2	2	5	16	46	1.2				
		2.5	2.4	2.4	2.5	2.4	3.0	2.5	2.6						
	հոկտեմբեր	39	7	3	4	6	13	11	17	44	1.5				
		2.6	2.2	2.0	2.1	2.5	3.6	3.2	2.7						

Մթնոլորտային օդ.

Ձորագետի հանքավայրի շրջանի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է: Հարակից բնակավայրերի բնակիչները զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ, ինչպես նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

Տարածքում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չկան: Արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպություններ կան Տաշիր քաղաքային բնակավայրում (հայցվող տարածքի արևմտյան սահմանից մոտ 4.0կմ հեռավորության վրա), որտեղ գործում է քարի մշակման մեկ արտադրամաս, կազմակերպված է դոների և պատուհներիարտադրության, աշխատում են հացի, կաթնամթերքների մշակման ընդհանուր թվով 16 արտադրամասեր:

Օդային ավազանի աղտոտումը հիմնականում պայմանավորված է ավտոճանապարհներով երթևեկող տրասնպորտային միջոցների արտանետումներով: Տարածաշրջանով անցնում է Մ3 միջպետական նշանակության ավտոճանապարհը, ամենախոշոր բնակավայրը Տաշիրն է: Այդ հատվածում CO₂ գազի տարեկան արտանետումների քանակը գնահատվել է շուրջ 16.0հազ.տ/տարեկան: Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից


մթնոլորտային օդի որակի պարբերական մշտադիտարկում հայցվող տարածքի շրջանում չի իրականացվում, ինչը վկայում է բարվոք էկոլոգիական իրավիճակի վերաբերյալ:

Հանքային ջրերի արդյունահանման աշխատանքների տարածքում ընկերության պատվերով կատարվել է մեկ դիսկրետ դիտարկում, որի արդյունքում արձանագրվել է օդի ֆոնային վիճակի հետևյալ ցուցանիշները. փոշի՝ 0.075մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.01մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.005մգ/մ³ և ածխածնի օքսիդ՝ 0.22մգ/մ³:

Հողաբուսական ծածկույթ.

Չորագետի հանքավայրի շրջանում տարածված են հիմնականում սևահողերը, առանձին փոքր հատվածներով զարգացել են մարգագետնային սևահողերն ու գետահովտադարավանդային մարգագետնա-ճմային հողերը (նկար 10):

Տարածքի սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում: Հողերը ձևավորվել են հրաբխանստվածքային ապարների խորը հողմահարման հաշվին:



Նկար 10.

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Սևահողերում հումուսի պարունակությունը տատանվում է 6-8%

սահմաններում: Թերությունների վրա ընկած տարածություններում, կախված լանջի դիրքադրումից և հողակտորների օգտագործման բնույթից, հումուսի պարունակությունները նվազում են, հասնելով 3.5%: Հումուսի բաղադրությունում գերակշռում են հումինաթթուները, $C_{\text{հթ}}:C_{\text{ֆթ}}$ հարաբերությունը հասնում է 1.89-ի:

Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.18-0.27%), ֆոսֆորական թթվով (0.17-0.23%) և կալիումով (մոտ 1.9%):

Հորատանցքի շրջակայքում տարածված են տարավացված, փոքր հզորության հարուստ հումուսային կավավազային սևահողերը: Հումուսի մեծ պարունակությունները և բավական մանր մեխանիկական կազմը պայմանավորում են սևահողերի կլանողականության հատկությունը՝ մոտ 50մգ.էկվ 100գ հողում:

Տարածքից վերցված սևահողերի նմուշում արձանագրվել է պղնձի 1.01 մգ/կգ և ցինկի 8.2մգ/կգ պարունակություններ:


Հայցվող տարածքի սևահողերի հզորությունը տատանվում է 0.10-ից - 0.45մ սահմաններում՝ միջինը կազմելով 0.3մ:

Մարգագետնասևահողերը տարածված են գլխավորապես գետահովիտներում և ձևավորվում են գետաբերուկ գլաքարերի, ավազակավերի և կավավազների վրա: Սովորաբար ճմակալված են: Ունեն մեծ հզորություն, կնձկա-հատիկային ստրուկտուրա, կարբոնատներից զուրկ են, ունեն կլանման մեծ տարողություն (մինչև 37.5-57.4մգ.էկվ 100 գ հողում): Հողերն ունեն թույլ թթվային ռեակցիա (pH=5.5-6.7):

Գետահովտադարավանդային հողերում ծագումնաբանական հորիզոնները թույլ են արտահայտված: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը հասնում է 1.8-ից մինչև 4.36%: Հողային լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (մոտ 18.4 մգ.էկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:

Բուսական աշխարհը. Ձորագետի հանքավայրի շրջանը ըստ Հայաստանի ֆլորիստիկ շրջանների բաժանման (Թախտաջյան, 1954) գտնվում է Լոռու ֆլորիստիկ շրջանում, ուր բուսականությունն աչքի է ընկնում համակեցությունների բազմազանությամբ, տեսակային հարուստ կազմով: Հայցվող տարածքում բուսածածկի կազմը տիպիկ մարգագետնատափաստանային է՝ տարախոտա-հացազգային համակեցություններով (նկար 11):

ՀԱՅՅՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ՄԻՆԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Մարգագետնատափաստանային բուսականություն
- 2 - Տափաստանային հացազգային, տարախոտա-հացազգային բուսականություն

Նկար 11.


Հացազգիներից (Poaceae) հանդիպում է դաշտավուն մարգագետնային (*Poa pratensis* L.), շուղախոտ մարգագետնային (*Festuca pratensis* Huds.), ոգնախոտ հավաքաված (*Dactylis glomerata* L.), բարակոտնուկ Ալբովի (*Koeleria albovii* Domin), սեզ սողացող (*Elytrigia repens* (L.) Nevski), սիզախոտ լեռնային (*Phleum montanum* K.Koch):

Բարդածաղկավորներից (Asteraceae) հանդիպում է խատուտիկ դեղատնային (*Taraxacum officinalis* Wigg.), օշինդր սովորական (*Artemisia vulgaris* L.), հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium* L.), սինձ ցանցավոր (*Tragopogon reticulatus* Boiss. et Huet.) և լվածաղիկ կուսատերև (*Tanacetum parthenium* (L.) Sch.Bip.); բակլազգիներից (Fabaceae)՝ երեքնուկ մարգագետնային (*Trifolium pratense* L.), երեքնուկ մազմզոտագլուխ (*T. trichocephalum* M. Bieb.), աովույտ գայլուկանման (*Medicago lupulina* L.), կորնգան Բիբերշտեյնի (*Onobrychis biebersteinii* Sirjaev):

Վարդազգիների (Rosaceae) դենդրոֆլորայի ներկայացուցիչներից հանդիպում է սալորենի (*Prunus divaricata* Led.), մասրենի սովորական (*Rosa canina*):

Դիտարկվել են լերդախոտ սովորական (*Teucrium chamaedrys*), եղեսպակ օղակաձև (*Salvia verticollata* L.), կասվադաղձ Մուսինի (*Nepeta mussinii* Spreng.), վառվռուկ տափաստանային (*Alyssum murale* Waldst. Et Kit.), եղինջ երկտուն (*Urtica dioica* L.), եզան լեզու մեծ (*Plantago mayor*), թանթոնիկ հակադրատերև (*Sedum oppositifolium* Sims), ավելուկ սովորական (*Rumex acetosa* L.), սրճուկ խոցված (*Hypericum perforatum* L.): Գետակների, առվակների հարակից հատվածներում աճում են եղեգ և կյուն:

Անտառային բուսականություն հայցվող տարածքում չկա: Անտառապատ տարածքներ, պաշտպանական անտառաշերտեր առկա են Ձորագետի հանքավայրի տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա՝ Ուռուտ բնակավայրերի մոտ (նկար 12): Դրանք պատկանում են Տաշիրի անտառապետությանը, անտառային ծածկույթի կազմում նշվում են սոճի, կաղնի, թխկի, կեչի, ուռենի, բարդի:



Նկար 12.

Կենդանական աշխարհը ներկայացված է լեռնային տափաստանների բնորոշ տեսակներով: Ըստ գրական տվյալների, համայնքների բնակիչների հարցումների և դաշտային դիտարկումների՝ կաթնասուններից տարածքում հանդիպում են դաշտամուկ, նապաստակ, գայլ, աղվես, ոզնի: Թռչուններից հանդիպել են անտառային կաչաղակ, կաքավ, կեռնեխ, արտույտ, ոսպնուկ:

Տարածված են մորեխներ, ձիուկներ, մթնաթներ, գոմաղբաբզեզներ և բշտնաբզեզներ, թիթեռներից՝ ճերմակաթիթեռներ, կապտաթիթեռներ ու բվիկներ:

Հայցվող տարածքի հատող բազմաթիվ ձորակների եղեգնապատ վայրերում հանդիպում է ասիական մորեխ և թռչող գամբիկ: Ձկներից դիտվել է կողակ և կարաս:

Նախնական գնահատման հայտի կազմման ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքերը, դրանցում նշված տեսակների աճելա- և ապրելավայրերը արտացոլող սխեմատիկ քարտեզները՝ Ձորագետի հանքավայրի տարածքում պահպանության ենթակա բուսական և կենդանական տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Ըստ ՀՀ բույսերի կարմիր գրքի՝ հանքավայրի շրջանում հանդիպում են հետևյալ բուսատեսակները.

Հ/Հ	Բույսի անվանումը	Կատեգորիա	Տարածման առանձնահատկությունները	Պահպանության միջոցառումները
1	2	3	4	5
1	Թրաշուշան Ջավախքի	Վտանգված տեսակ	Աճում է միջին և վերին լեռնային գոտում, 1400-2200մ բարձրությունների վրա, մարգագետիններում, մարգագետնա-տափաստաններում, խոնավ և ճահճացված վայրերում, Տաշիր քաղաքի մոտ, հանքավայրից մոտ 4կմ հեռավորության վրա	Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկում
2.	Ջրաշուշան սպիտակ	Վտանգված տեսակ	Աճում է միջին լեռնային գոտում, 1400-1900մ բարձրությունների վրա, լճերում, կանգնած ջրերում, Ստեփանավանից մինչև Տաշիր	Չեն իրականացվում
3.	Նեղտերև Դոդոնի	Վտանգված տեսակ	Աճում է վերին լեռնային գոտում, խոնավ տեղերում, գետերի ափերին, Ստեփանավանից մինչև Տաշիր	Չեն իրականացվում
4.	Գորտնուկ երկարատերը	Վտանգված տեսակ	Աճում է միջին լեռնային գոտում, 1400-1500մ բարձրությունների վրա, ճահիճներում, լճերի ափերին: Հայտնի է Տաշիր, Սարատովկա, Նովոսելցովո բնակավայրերի շրջակայքից	Չեն իրականացվում
5.	Ծովուսպ լողացող – <i>Salvinia natans</i>	Կատեգորիա CR B 1 ab(iii) +2 ab(iii): Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ	Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10կմ ² –ից պակաս է:	Չեն իրականացվում

Ըստ ՀՀ կենդանիների կարմիր գրքի՝ հայցվող տարածքի շրջանում, Լոռու սարահարթի լճակներում հանդիպում է մոխրագույն սուզակ: Դա քիչ տարածված տեսակ, որի քանակությունը կրճատվում է: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Արփի լիճ» և «Սևան»ազգային պարկերում:

Շահագործական հորատանցքի և դրան հարակից՝ 500մ շառավղով տարածքներում կատարվել են կենսաբազմազանության ուսումնասիրություն երթուղային եղանակով: ՀՀ

բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում նշված տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր չեն արձանագրվել:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Չորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկա:

Հայցվող տեղամասից արևմուտք մոտ 30.0 կմ հեռավորության վրա գտնվում է «Արփի լիճ» ազգային պարկը, մոտ 14կմ դեպի հարավ-արևելք՝ «Գյուլագարակ» պետական արգելավայրը:

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ բնության հատուկ պահպանվող տեսակ է բնության հուշարձանը: ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը: ՀՀ Լոռու մարզի տարածքում հաշվառված հուշարձանների ցանկը և նկարագիրը ներկայացված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7.

Լոռու մարզի բնության հուշարձանները

Հ/Հ	Անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3
1	«Բազալտանման ապարների (Դիաբազների) զուլավոր դայք»	Լոռու մարզ, Ալավերդի քաղաքային համայնք, Լալվար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լենհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մադան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500 մ դեպի արևմուտք
2	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռու մարզ, Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Չորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա
3	«Չորագետի հրային ներժայթուկ»	Լոռու մարզ, Չորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք
4	«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Լոռու մարզ, Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում
5	«Թռչկան» ջրվեժ	Լոռու մարզ, Մեծ Պառնի գյուղական համայնք, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա

6	«Դսեղի Ծովեր» լիճ	Լոռու մարզ, Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիղաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի ավսեաձև գոգավորությունում
7	«Շամլուղի լճակ»	Լոռու մարզ, Շամլուղ գյուղական համայնք
8	«Օձի պորտ»	Լոռու մարզ, Արդվի գյուղական համայնքի արևելյան մասում, Հովնան Օձունեցու կաթողիկոսի մատուռից 120 մ հյուսիս-արևմուտք
9	«Քոշաքարի մրտավարդ»	Լոռու մարզ, Մարգահովիտ գյուղական համայնքի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառտնտեսության Եղեգնուտի անտառպետության բարձրադիր գոտում

Ձորագետի հանքավայրի, մոտակա Սարատովկա բնակավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

Աղմուկի մակարդակ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն, քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակում

Ընկալիչ	Ժամերը	dBL AEQ	dBLA MAX
Բնակելի և հասարակական շենքերի մոտ	06:00-22:00	55	70
	22:00-06:00	45	60

Աշխատանքների ընթացքում «ԱԿԲԱ» ՍՊ ընկերությունը կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով, ինչպես նաև ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշումների հավելվածի պահանջներով:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի:

Ծրագրավորվող աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը մոտակա բնակավայրի տարածքում:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ հանքային ջրի տեղափոխման աշխատանքները, ճանապարհների տրանսպորտի տեղաշարժը:

Հանքավայրում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 65դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = LAէկվ - ՈLAհեռ - ՈLAէկր - ՈLAկանաչ բանաձևով, որտեղ՝ LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=65դԲԱ, ՈLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, ՈLAհեռ կազմում է 20դԲԱ,

ՈLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (բացահանքի տարածք),

ՈLAէկր = 10դԲԱ,

ՈLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով,

ՈLAկանաչ=5դԲԱ:

Աղմուկի մակարդակը Սարատովկա գյուղի մոտ կկազմի՝

Laտար = LAէկվ - ՈLAհեռ - ՈLAէկր - ՈLAկանաչ = 65 - 20 - 10 - 5 = 30դԲԱ (նորման 45դԲԱ):

Հանքային ջրի տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային

թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Գործունեության բնույթից ելնելով հանքային ջրի շահագործման աշխատանքների ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Հանքավայրի բնութագիրը. Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի Սարատովկա գյուղի վարչական տարածքում՝ Տաշիր գետի կիրճում, Տաշիր քաղաքից 5.0 կմ դեպի հարավ, հարավ-արևելք:

Հանքավայրի հիպոստատիկ բացարձակ նիշերը տատանվում են 1462.0-1490.0մ սահմաններում: Հանքավայրը զբաղեցնում է շուրջ 1.04 կմ² տարածք:

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի մանրամասն հետախուզական աշխատանքները կատարվել են 1991-1993թթ.-ին, որի արդյունքում յոթ հորատանցքերով հաշվարկվել և ՀՀ կառավարությանն առընթեր օգտակար հանածոների պաշարների հանձնաժողովի (ՕՀՊՀ) կողմից 01.11.1993թ.-ի դրությամբ (արձանագրություն թիվ 6, 24.12.1993թ.) հաստատվել են Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործական պաշարները, այդ թվում՝

Հանքային ջրի պաշարներ

4/87 հորատանցքով - A կարգի՝ 0.56 լ/վրկ կամ 48.4 մ³/օր,

1ՔՑ հորատանցքով - A կարգի՝ 0.38 լ/վրկ կամ 32.8 մ³/օր,

35/87 հորատանցքով - A կարգի՝ 0.42 լ/վրկ կամ 36.3 մ³/օր,

3ՔՑ հորատանցքով - A կարգի՝ 2.4 լ/վրկ կամ 207.4 մ³/օր:

7/90 հորատանցքով - A կարգի՝ 2.38 գ/լ կամ 205.6 մ³/օր

Ըստ A կարգի՝ 6.14 լ/վրկ կամ 530.5 մ³/օր (Տաշիր-1 տեղամաս)

2ՔՑ հորատանցքով - B կարգի՝ 1.66 լ/վրկ կամ 143.4 մ³/օր,

6/90 հորատանցքով - B կարգի՝ 1.95 լ/վրկ կամ 168.5 մ³/օր

Ըստ B կարգի՝ 3.61 լ/վրկ կամ 311.9 մ³/օր (Տաշիր-2 տեղամաս)

Ազատ ածխաթթու գազի պաշարներ

4/87, 1ՔՑ, 35/87, 3ՔՑ և 7/90 հորատանցքերով - A կարգի՝ 0.73 լ/վրկ կամ 63.1 մ³/օր,

2ՔՑ և 6/90 հորատանցքերով - B կարգի՝ 0.34 լ/վրկ կամ 29.4 մ³/օր

Հանքավայրի հանքային ջրի շահագործական պաշարները կարող են օգտագործվել արդյունաբերական շշալցման և առողջանարային բուժման համար:

Չորագետի հանքավայրը իրենից ներկայացնում ճեղքաերաքային ածխաթթվային հանքային ջրերի ջրաճնշումնային համակարգ գենետիկորեն կապված Չորագետի խորքային բեկվածքի և Էոցենի հասակի տուֆաբեկչիաների և հրաբխային ապարների ստորին գոտու հետ:

Հանքային ջրի ջրատար միջակայքերը տեղադրված են՝ 195.0-210.0մ (հոր. 4/87), 190.0-210.0մ (հոր. 35/87), 175.0-250.0մ (հոր. III-K), 201.0-250.0մ (հոր. 1ՓԾ), 172.4-250.0մ (հոր. 3ՓԾ), 191.5-250.0մ (հոր. 2ՓԾ) և 178.0-250.0մ (հոր. 6/90) խորություններում:

Հանքային ջրերի ջերմաստիճանը տատանվում է՝ 15.0-17.3°C, իսկ հանքայնացումը՝ 2.2-3.8գ/լ սահմաններում, իսկ ստատիկ մակարդակը՝ + 0.69-ից մինչև +3.84 մետրը:

Հանքավայրի հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազլիֆտի հաշվին:

Հանքային ջրերի շարժման ուղղությունը՝ արևելքից դեպի արևմուտք է, որը ցույց է տալիս որ որոշակի սնեցում տեղի է ունենում այսպես կոչված Սարատովկայի լեռներից՝ տեղադրված 1550-1600մ բարձրության վրա:

Հանքային ջրերի հիմնական սնեցումը տեղի է ունենում ածխաթթվային հանքային ֆլուիդների հաշվին, որոնք երկրի խորքից տեկտոնական խախտման գոտիներով բարցրանում են դեպի երկրի մակերես:

Չորագետի հանքավայրի հանքային ջուրը ըստ քիմիական կազմի՝ հիդրոկարբոնատ-սուլֆատային, մագնեզիում-նատրիումային է, մասամբ մագնեզիում-կալցիումային:

Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 1.4-2.3գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 1.06-1.28գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտներից բորի պարունակությունը կազմում է մինչև 0.8 մգ/լ, բրոմինը՝ 0.25-1.0մգ/լ, յոդինը՝ 0.12-0.5մգ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների քանակի պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Ըստ ջրաճնային ցուցանիշի հանքային ջուրը թույլ թթվայինից մինչև թույլ հիմնային է:

Ռադիոակտիվ էլեմենտներից ուրանի պարունակությունը կազմում է 1.2x10⁻⁹գ/լ, ռադիումինը՝ 5.0x10⁻¹⁰գ/լ:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Հանքավայրի ջրերն իրենց քիմիական կազմով և առանձնահատկություններով մոտ են Վրաստանի «Բոլնիսի» հանքային ջրերի տիպին:

Հանքային ջրերի ռեժիմը տարեկան կտրվածքում արտահայտվում է ծախսի, ջերմաստիճանի և քիմիական կազմի կայունությամբ:

Ջրի քիմիական անալիզները կատարվել են Երկրաբանական վարչության «Կենտրոնական», այժմ «Անալիտիկ», ՀՀ Ազգային ակադեմիայի երկրաբանական ինստիտուտի հիդրոքիմիայի և ՀՀ առողջապահության նախարարության «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ լաբորատորիաներում (տե՛ս Հավելված 1):

Թիվ 2ՔՅ հորատանցքը գտնվում է Սարատովկա գյուղի հյուսիսային ծայրամասում, գյուղ տանող երկաթե կամուրջից 165.0մ դեպի հարավ-արևելք, Տաշիր գետի ձախ ավից մոտ 15.0մ հեռավորության վրա:

Հորատանցքի տեղագրական կոորդինատներն են՝

I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով	
X = 4549757	Y = 8442252	X = 4549750	Y = 8442150

Հորատանցքի աշխարհագրական կոորդինատներն են՝

- հյուսիսային լայնության - $41^{\circ} 4' 47.40''$
- արևելյան երկայնության - $44^{\circ} 18' 41.20''$

Հորատանցքի բացարձակ բարձրությունը կազմում է 1470.2մ:

Թիվ 2ՔՅ հորատանցքով կտրվել է 3 ջրատար հորիզոններ տեղադրված՝ 56.0- 88.1մ և 127.2-155.0մ, (քաղցրահամ ջրի) և 191.5-250.0մ (հանքային ջրի) խորությունների վրա: Հանքային ջրի ստատիկ մակարդակը 3.19մ երկրի մակերևույթից բարձր է, ջերմաստիճանը 15.0°C , ծախսը 1.66լ/վրկ, հանքայնացումը 2.2գ/լ, լուծված ածխաթթու գազի պարունակությունը՝ 1.4գ/լ, իսկ ազատ գազինը՝ 1.06գ/լ: Ըստ քիմիական կազմի՝ հիդրոկարբոնատ-սուլֆատային, մագնեզիում-կալցիում-նատրիումային է:

Հորատանցքի ամրակապման 146 մմ տրամագծի խողովակով երկրի մակերես դուրս է գալիս 4.5 լ/վրկ ծախսով քաղցրահամ ջուր, իսկ 127 մմ տրամագծի խողովակով՝ 1.66 լ/վրկ հանքային ջուր: Արդյունահանման իրավունք ստանալուց հետո ընկերությունը սահմանված կարգով կդիմի ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ստանալու թիվ 2ՔՅ հորատանցքի քաղցրահամ ջրի ջրօգտագործման թույլտվություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացնում ենք հանքավայրի հորատանցքերի բնութագրերը:

ՀՀ Լոռու մարզի Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի բնութագրերը

Հորատանցքի համարը, խորությունը (մ) և գտնվելու վայրը	Ամրակապման տրամագիծը, մ / խորությունը, մ	Ջրի մակարդակը, մ ստատիկ դինամիկ	Ջրի ծախսը, լ/վրկ մ ³ /օր	Ջրի ջերմաստիճանը, °C	Հանքայնացումը, գ/լ	Ջրային հորիզոնի միջակայքը, մ	Ածխաթթու գազի պարունակությունը, գ/լ մ ³ /մ ³		Կուրյովի բանաձևը
							ազատ	լուծված	
35/87 (210.0) – Սարատովկա գյուղի դպրոցից 0.8կմ հյուսիս-արևմուտք (3430) Տաշիր գետի ձախ ափին	<u>219</u> ; <u>168</u> ; <u>146</u> ; <u>127</u> 30 90 150 210	<u>+ 0.76</u> + 0.7	<u>0.42</u> 36.3	15.1	3.8	60 – 89-բ. 123 – 155-բ. 190 – 210-հ.	<u>1.19</u> -	2.02	<u>HCO₃62 SO₄31 CL7</u> Mg48 (Na+K)26 Ca26
4/87 (210.0) – 35/87 հորատանցքից 0.22կմ դեպի հարավ-արևելք	<u>168</u> ; <u>146</u> ; <u>127</u> 30 95 185	<u>+ 0.97</u> + 0.85	<u>0.56</u> 48.4	15.1	3.8	58 – 92-բ. 120.5 – 158-բ. 195 – 210-հ.	<u>1.16</u> -	1.94	<u>HCO₃64 SO₄28 CL8</u> Mg48 (Na+K)26 Ca26
7/90 (250.0) – Տաշիր գետի ձախ ափին Լոռիի ջրանցքի գլխամասային կառույցի մոտ	<u>168</u> ; <u>146</u> ; <u>127</u> 30 30-100 155	<u>+ 3.81</u> + 0.88	<u>2.38</u> 205.6	17.3	3.3	61 – 82- բ. 121 – 150-բ. 175 – 250-հ.	<u>1.14</u> -	2.28	<u>HCO₃70 SO₄21 CL9</u> Mg55 Ca25 (Na+K)20
1ՔՅ (250.0) – Տաշիր գետի աջ ափին 35/87 և 4/87 հորատանցքերի միջև	<u>168</u> ; <u>146</u> ; <u>127</u> ; <u>108</u> 12 97 160 250	<u>+ 0.69</u> + 0.4	<u>0.38</u> 32.8	15.0	3.7	59 – 95-բ. 116 – 160-բ. 201 – 250-հ.	<u>1.22</u> -	1.98	<u>HCO₃64 SO₄28 CL8</u> Mg49 (Na+K)28 Ca23
3ՔՅ (250.0) – Տաշիր գետի ձախ ափին, Սարատովկա գյուղի կենտրոնում, երկաթե կամուրջի մոտ	<u>168</u> ; <u>146</u> ; <u>108</u> 10 10-70 250	<u>+ 3.84</u> + 0.8	<u>2.4</u> 207.4	17.3	3.2	54.6 – 85-բ. 120 – 145.5-բ. 172.4 – 250-հ.	<u>1.28</u> -	2.31	<u>HCO₃63 SO₄29 CL8</u> Mg49 (Na+K)26 Ca25
2ՔՅ (250.0) – Տաշիր գետի ձախ ափին, Սարատովկա գյուղի հյուսիսային ծայրամասում, 4/87 հորատանցքից 0.5կմ դեպի հարավ-արևելք	<u>168</u> ; <u>146</u> ; <u>108</u> 10 95 250	<u>+ 3.19</u> + 0.4	<u>1.66</u> 143.4	15.0	3.8	56 – 88.1-բ. 127.2 – 155-բ. 191.5 – 250-հ.	<u>1.06</u> -	1.78	<u>HCO₃64 SO₄28 CL8</u> Mg52 Ca28 (Na+K)23
6/90 (300.0) – Սարատովկա գյուղի կենտրոնից 0.55կմ հյուսիս-արևմուտք Տաշիր գետի ձախ ափին գյուղի զարաժից 100.0մ արևելք	<u>168</u> ; <u>146</u> ; <u>127</u> 51 51-111 110-180	<u>+ 3.0</u> + 0.7	<u>1.95</u> 168.5	17.0	2.2	59 – 85-բ. 120 – 162-բ. 178 – 208-հ. 208 – 250-հ.	<u>1.11</u> -	1.78	<u>HCO₃70 CL17 SO₄13</u> Mg49 (Na+K)28 Ca23

բ. – քաղցրահամ, հ. - հանքային

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրը դա մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և ազդեցության գնահատման կարիք ունի:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասագերծումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական, մեխանիկական, ռադիոակտիվ և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կաւմը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը դա շրջակա միջավայրի վրա բնածին և մարդահարույց ներգործության էկոլոգիական հետևանքների վերլուծություն է՝ շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դեպքում իրականացվում է մթնոլորտային օդ և մակերևութային ջրերի մեջ արտանետվող աղտոտող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ, մշակվում են դրանց կրճատման և կանխման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վիճակի գնահատման համար սահմանվում են աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցետրացիաներ, սահմանային թույլատրելի արտանետումներ և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Մարդն իր արտադրական գործունեությամբ մշտապես ազդում է շրջապատող բնության վրա: Այդ ազդեցության հետևանքով բնական միջավայրը կարող է բարելավվել (ծառատնկում, ռոռոգում և այլն), դառնալ ավելի բարենպաստ մարդու կյանքի ու գործունեության համար, կամ էլ խաթարվել, քայքայվել:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում: Առաջին, երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում է նրա տարրերը ոչ այն չափով, որքան կարելի է և ոչ այնտեղ, որտեղ կարելի է: Երկրորդ, երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրական կամ կենցաղային այնպիսի թափոններ և այն քանակով, որ բնությունը չի կարողանում ինքնամաքրվել:

Երկու դեպքերում էլ տեղի է ունենում բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտում, և հասունանում է էկոլոգիական ճգնաժամը, ապա և աղետը:

Հորատանցքից հանքային ջրի արդյունահանման աշխատանքները շրջակա միջավայրի վրա ազդեցություն գրեթե չեն ունենալու:

Հանքավայրի տարածքում բացակայում են սողանքային երևույթները, չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, չեն արձանագրվել ՀՀ բոյսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների աճելավայրեր կամ ապրելավայրեր, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության օբյեկտներ:

«ԱԿԲՈՒ» ՍՊԸ կողմից հանքավայրի հորատանցքի ջրի շահագործումը չունի բարձր ռիսկայնություն, այն չի ուղեկցվելու արտանետումներով ու ընդերքօգտագործման թափոններով (հետևաբար հիմքեր չկան խոսելու դրանց կազմի, ծավալի, օգտագործման, վերամշակման և պահեստավորման հետ կապված այլ բնութագրերի մասին), որոնք կարող են վտանգավոր լինել շրջակա միջավայրի համար, ունենալ բնապահպանական ռիսկեր: Հարկ եմ համարում նշել, որ ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի հանքավայրերի շահագործումը սկզբունքորեն տարբերվում է պինդ օգտակար հանածոների (մետաղական, ոչ մետաղական) հանքավայրերի շահագործումից: Ոլորտին քաջածանոթ յուրաքանչյուր մասնագետ կփաստի, որ ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի հանքավայրերը բնական միջավայրի վրա բացասական ազդեցության ռիսկեր գրեթե չունեն, ի տարբերություն մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի, որոնց շահագործման ընթացքում արձանագրվել և այսօր էլ արձանագրվում են շրջակա միջավայրի, էկոհամակարգի վրա բազմաթիվ բացասական հետևանքներ: Դա պայմանավորված է ամենից առաջ հանքավայրերի բնությամբ և դրանց շահագործման առանձնահատկություններով: Ինչը երբեմն անտեսվում է գնահատականներ ներկայացնելիս: Հաշվի առնելով նաև այն, որ հանքային ջրերի հանքավայրերի շահագործման երկարատև փորձի ընթացքում չեն արձանագրվել կամ փաստվել շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցության մասին տվյալներ, դա ևս հերթական փաստն է կամ տվյալը դրանց շահագործման էկոլոգիական ռիսկերի բացակայության:

Թեպետ հանքային ջրի արդյունահանումն ինքնին չի ուղեկցվելու արտանետումներով և վնասակար թափոններով, այնուամենայնիվ չի կարելի բացառել շրջակա միջավայրի վնասակար արտադրական խոտանների (վնասված տարաներ և այլն) հնարավորությունը, որոնք ոչ պատշաճ ուշադրության դեպքում կարող են բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Մակայն դրանք կչեզոքացվեն և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունը հնարավորինս կբացառվի, քանզի դրանք համապատասխան փաթեթավորմամբ կառանձնացվեն և պատշաճ ձևով կիրականացվի աղբահանությունը: Ավելին, հանքավայրի շահագործումը չի ուղեկցվելու, օրինակ, աղմուկով, որը որևէ կերպ

կարող է անհանգստացնել ազդակիր համայնքի բնակիչներին (հանքավայրի հորատանցքը գտնվում է մոտակա բնակելի տներից մոտ 0.3 կմ հեռավորության վրա):

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում նախատեսվող աշխատանքների կատարման և ջրհավաք հորատանցքի շահագործման ժամանակ որևիցե տեխնաձին ճնշումներ Սարատովկա բնակավայրի շրջակայքի մթնոլորտի, մակերևութային ջրային ռեսուրսների, հողային ծածկույթի, կենսաբազմազանություն, լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվելու, քանի որ՝

- փոշու և վնասակար ծխագազերի արտանետումներ չի կատարվելու,
- ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորվելու է համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ (տես հանքային ջրի ջրհավաք հորատանցքի գլխամասի սխեման):
- ջրհավաք հորատանցքի բերանի շուրջը կիրականացվի ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը կբացառի մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք:
- ջրհավաք հորատանցքի շուրջ կկառուցվի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտի՝ հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Ընկերությունն օգտվելու է արդեն իսկ գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից, նոր շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում:

Հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորվելու է համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ, ինչի նպատակն է հանքային ջրերի պահպանությունը և աղտոտման կանխարգելումը:

Ջրհավաք հորատանցքի շուրջը ստեղծվելու է սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտի, որը ցանկապատվելու է և ապահովվելու է պահպանությունով:

Հորատանցքի բերանի շուրջ կատարվելու է ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը բացառում է մակերևութային աղտոտված ջրերի հոսքը դեպի հորատանցք:

Հանքային ջուրը ջրհավաք հորատանցքից չժանգոտվող (խմելու որակի) խողովակով բեռնվելու է չժանգոտվող պողպատից պատրաստված 13.2տ տարողությամբ ցիստեռնի մեջ:

Կապտաժային շինության շուրջը բացառվելու է ցանկացած տեսակի գործունեություն, որը կարող է որևէ կերպ ազդել հանքային ջրի վրա:

Ջրառի արդյունքում մթնոլորտային օդը աղտոտող արտանետումներ չեն լինելու: Հողի և բուսածածկի խախտում չի նախատեսվում, իսկ իրականացվելիք արդյունահանման աշխատանքների նպատակն է բնական պաշար հանդիսացող հանքային ջրի արդյունավետ և նպատակային օգտագործումը:

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրա գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտու առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ձորագետի հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքի շահագործումը ընկերությունը կիրականացվի փակ ռեժիմով, այսինքն՝ հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կկահավորվի համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ: Սույն աշխատանքները կիրականացվեն համաձայն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշմանը, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

Հանքավայրի արդյունավետ շահագործման և արտադրության կազմակերպման համար ընկերությունը համալրված կլինի բազմափորձ մասնագետներով:

Հանքային ջրերի հանքավայրերի շահագործման բազմամյա փորձը գալիս հավաստելու, որ ջրհավաք հորատանցքերի շահագործման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլինի գրեթե զրոյական:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

5.1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ

Մարդկային արտադրական գործունեությունը միաժամանակ լուրջ վտանգ կարող է սպառնալ շրջապատող միջավայրին, եթե այն իրականացվի առանց հաշվի առնելու ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջապատող միջավայրի պահպանության պայմանները:

Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (հոդված 64), ընդերք շահագործողները պարտավոր են ապահովել շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, իրականացնելով հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը (կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի № 108-Ն որոշման դրույթներով),
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,
- շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը և այլն:.

Ջրհավաք հորատանցքի շահագործման աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության պահանջները, որոնք ներառում են հետևյալ հիմնական միջոցառումները.

- պահպանել աշխատանքների կատարման համար հողահատկացման սահմանված կարգը,
- բնական պայմանների խախտման բացասական երևույթների վերացում,
- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանման համար առանցքային միջոցառումների ձեռնարկումը,
- աշխատանքների վարման անվտանգ ձևերի ընտրություն և այլն:

Ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային) հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի Սարատովկա գյուղի վարչական տարածքում:

Հանքավայրի հիպսոմետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 1462.0-1490.0 մ սահմաններում:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլիմայի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Աշխատանքների կատարման ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետով սահմանված պահանջները և պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման դեպքում աշխատանքները կդադարեցվեն, այդ մասին անհապաղ կտեղեկացվի լիազորված մարմինին:

Հարկ է նշել, որ սույն հաշվետվության նախորդող շարադրանքում վերը նշված օրենսդրության պահանջների մասով նախատեսված համապատասխան միջոցառումների վերաբերյալ որոշակի մանրամասներ ներկայացվել են: Այսինքն՝ անդրադարձ է կատարվել թե՛ բնական պայմանների խախտման հետ կապված հնարավոր բացասական հետևանքների հարցին, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ջրօգտագործման սահմանված ռեժիմի չխախտման, շրջակա միջավայրի պահպանման հետ կապված աշխատանքներին, ինչպես նաև աշխատանքների վարման հետ կապված անվտանգ ձևերի, տեխնիկական անվտանգության հետ կապված հարցերին:

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնածին ճնշումներ հանքավայրի շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների վրա չեն դրսևորվելու, հաշվի առնելով հանքային ջրերի հանքավայրերի շահագործման աշխատանքների բնույթը և երկարամյա փորձը, որը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա:

Ավելին, հաշվի առնելով ստորերկրյա ջրերի վերականգնվող ռեսուրս լինելու հանգամանքը, հորատանցքի շահագործումն ու ստորերկրյա հանքային ջրերի անգամ ողջ պաշարի արդյունահանումը որևէ կերպ չի կարող ուղեկցվել անդառնալի հետևանքներով, չի կարող տարածքի ջրային ռեսուրսների պաշարների կռճատման վրա էական բացասական ազդեցություն ունենա:

Տարածքում պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով հանքավայրի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ: ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների դիտարկման դեպքում նախատեսվում է կանգնեցնել բոլոր աշխատանքները, հրավիրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետների, կատարել մանրակրկիտ հետազոտություններ: Հետազոտությունների արդյունքները կքննարկվեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ, կներկայացվի մշակված բնապահպանական միջոցառումների ցանկը :

**5.2. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու
փոխհատուցմանն ուղղված միջոցառումներ
(բնապահպանական կառավարման պլան)**

Հանքային ջրերի ջրհավաք հորատանցքերի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները հետևյալն են՝

1. Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքերի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտու առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում: Այդ իսկ պատճառով նախատեսվում է կապտաժային սարքավորումների պարբերական ստուգումներ, որի արդյունքում մաշված, շարքից դուրս եկած սարքավորումները կփոխարինվեն նորերով:
2. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից օգտակար հանածոների պաշարների հանձնաժողովի (ՕՀՊՀ) կողմից հաստատված պաշարի չափից ավելի արդյունահանումը:
3. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:
4. Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Ջրհավաք հորատանցքի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հորատանցքի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:
5. Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:

6. Իրականացնել հակավթարային միջոցառումներ:
7. Հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղային աղբով և այլ տեսակի թափոններով:
8. Նախատեսվում է առաջնորդվել համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի № 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

Այս բոլոր պահանջները ընկերության կողմից հաշվի կառնվեն և կիրականացվեն հանքավայրի հորատանցքի շահագործման ընթացքում:

Շրջակա միջավայրի բնական բաղադրիչների վրա՝ հողի, բուսական ծածկույթի, կենդանական աշխարհի, մակերևութային ջրային հոսքերի կամ մթնոլորտային օդի վրա որևէ նոր ազդեցությունների դրսևորումներ չեն նախատեսվում:

5.3. Հիդրոերկրաբանական և շրջակա միջավայրի մշտադիտարկումների (մոնիտորինգի) իրականացման պլան

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են գույզահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի զերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնաձին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

- 1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.
- 2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.
- 3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.

- 4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.
- 5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.
- 6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.
- 7) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցումը, անվերադարձ ազդեցության կանխարգելումը,
- 8) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

Ելնելով վերոհիշյալից, հանքավայրի թիվ 2ՔԾ հորատանցքի տարածքում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիտորինգ)՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային օդի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար (տե՛ս մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակության աղյուսակ 8-ը և նկար 13-ը):

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:


Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները: Արդյունքում կկազմվի հաշվետվություն, որը կներկայացվի «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ն հաշվառման և պահպանման:

Եթե հաստատված պաշարների և մոնիտորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480-Ն որոշման պահանջների, անհրաժեշտ կլինի վերագնահատել հանքային ջրի հանքավայրի պաշարները և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժին հաստատմանը:

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Աղյուսակ 8.

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Հանքային ջուր	հանքավայրի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում ընդգրկված թիվ 2ՔԾ հորատանցք	- ջրերի քիմիական կազմ, - մակարդակ, ջերմաստիճան, ջրի ծախս	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, - չափումներ	- եռամսյակը մեկ անգամ - 10 օրը մեկ անգամ
Հողային ծածկույթ	հորատանցքի հարակից տարածք	- հողերի քիմիական կազմ, - հողերում նավթամթերքների պարունակությունը	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	- տարեկան երկու անգամ
Մթնոլորտային օդ	հորատանցքի հարակից տարածք	- օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	- նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	- տարեկան մեկ անգամ
Կենսաբազմազանության ուսումնասիրություն	հանքավայրի տարածքում	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	- տարեկան մեկ անգամ



Սկար 13.

5.4. Մանիտարական պահպանության գոտի

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ հանքավայրի պաշտպանումն աղտոտումից, սպառումից:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 67-ի ստորերկրյա ջրերի հանքավայրերի շուրջը սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ:

Ածխաթթվային հանքային ջրի բարվոք մանրէաբանական կազմը, շրջապատող միջավայրը, հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը սնման և բեռնաթափման մարզերում և ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ (սահմանափակման գոտու) և երրորդ սանիտարական պահպանության գոտիների անտեսման և միայն առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու կառուցման անհրաժեշտության մասին:

Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները:

Նկատի ունենալով թիվ 2ՔՅ հորատանցքի երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը, այն գտնվում է բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Ջրհավաք թիվ 2ՔՅ հորատանցքը իր գլխամասային սարքավորումներով կներառվի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիում: Գոտու սահմանը պաշտպանված ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում ըստ գործող հրահանգի սահմանվում է $15.0մ \times 25.0մ = 375մ^2$: (հիմք՝ ՀՀ առողջապահության նախարարի 29 նոյեմբերի 2002 թ. N 803 հրաման): Գոտին պետք է պարսպատված լինի մետաղական կամ քարը

ցանկապատով և ապահովված պահպանությունով (տե՛ս ջրհավաք հորատանցքի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու սխեման):

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքի մոտ կալանավորվի այնպես, որ հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքի սահմաններից դուրս:

Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ հորատանցքի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ, այդ թվում օբյեկտների կառուցումը, մշտական կամ ժամանակավոր մարդկանց բնակվելը, թունաքիմիկատների և պարարտանյութերի տեղակայումը և օգտագործումը, ցանկացած կեղտաջրերի թափումը, լվացք անելը, անասուններին ջուր խմեցնելը, ինչպես նաև գործողություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ հանքավայրի հանքային ջրերի և նրանց սանիտարական վիճակի վրա:

Ընդերքօգտագործողը սանիտարական պահպանության գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի մարդկանց մուտքը, որոնք կապ չունեն հանքավայրի հորատանցքի շահագործման և պահպանության հետ արգելվում է:


Արգելվում է յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից: Այն կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի համաձայնությամբ:

Նշված գոտու տարածքում թույլատրվում է լեռնային և հողային աշխատանքների կատարումը, կառույցների շինարարությունը (կապտածների, պոմպային կայանների, ջրագծերի, պահակակետի, ջրի տարաների), հորատանցքի գլխամասի կահավորման, ափ ամրացնող, հակասողանքային և հակաերոզիոն աշխատանքների կատարումը, որոնք նպաստում են ստորերկրյա ջրերի հանքավայրն ու ջրատար հորիզոններն աղտոտումից զերծ պահելու և պահպանությունն ապահովելու:

ՍԽԵՄԱ

Ջրափակաբ հորատանցքի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու

Մասշտաբ 1 : 200



Պ ա յ մ ա ն ա կ ա ն ն շ ա ն ն ք

1. Դարպաս ղեմակով
2. Պահակակետ
3. Գործող հորատանցք
4. Նախազվող հորատանցք (գործողի կրկնորդ)
5. Գազանցատիչ
6. Առաջնային խողովակ
7. Առաջնային ջրահաշվիչ
8. Թողքի խողովակ փակմամբ և ջրահաշվիչով
9. Առաջնային խողովակի փակման
10. Առանձնացված ջրահաշվիչ
(արդյունաբերական նպատակով)

Տաշիր գետ



5.5. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլան

Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի և «Թափոնների մասին» ՀՀ օրենքի՝ ընդերքօգտագործման թափոններ են համարվում օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում առաջացած մակաբացման ապարներ և այլ թափոններ:

«ԱԿԲՈՒ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ Լոռու մարզի Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ժամանակ ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանում և հետևաբար ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլան և նրա իրականացման համար ֆինանսական երաշխիք չի նախատեսվում:

Թեպետ հանքային ջրի արդյունահանումն ինքնին չի ուղեկցվում արտանետումներով և վնասակար թափոններով, այնուամենայնիվ չի կարելի բացառել հորատանցքերի շահագործման աշխատանքների իրականացման ժամանակ արտադրական՝ նավթամթերքների, քսայուղերի և կենցաղային աղբի թափոնների առաջացման հնարավորությունը, որի արդյունքում որոնք ոչ պատշաճ ուշադրության դեպքում կարող են բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

1) Հնարավոր է առաջանան քսայուղերի և ավտոմոբիլային յուղերի մնացորդներ, որոնք կարող են օգտագործվել մեքենաների շահագործման տեխնոլոգիական փուլում:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի №430-Ն հրամանի հավելվածի բանեցված շարժիչների կուղերը դասվում են վտանգավորության 3-րդ դասին և հաշվառված են 5410020102 03 3 ծածկագրով (կազմը՝ յուղ 94.6%, մեխանիկական խառնուրդներ 2.1%, ջուր 3.2%), իսկ սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերը (ծածկագիր՝ 5410020302 03 3, կազմը՝ յուղ 94.5%, մեխանիկական խառնուրդներ 2%, ջուր 3.5%) վտանգավորության 3-րդ դասին:

Մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված ծառայություններ իրականացնող կազմակերպությունների տարածքում, որտեղ ապահովված են բոլոր անհրաժեշտ պայմանները նավթամթերքների գործածման, պահեստավորման և պահպանման համար: Բուն հանքավայրի տարածքում այս տիպի թափոններ չեն ձևավորվելու:

2) Տարեկան մոտ 2տ կենցաղային աղբի թափոնները (թուղթ, սննդի մնացորդ և այլն), որոնք առաջանալու են շահագործական աշխատանքների ժամանակ կուտակվելու են հատուկ

աղբի տոպրակների մեջ, որտեղից աղբը պատշաճ ձևով հեռացվում է համայնքի աղբահանությունն ապահովող օպերատորի կողմից: Հետևաբար այս թափոնները շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու: Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4:

6. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՁևՎՈՐՈՒՄԸ

Ընկերությունը, ինչպես արդեն ներածությունում նշվել է, նպատակ ունի հանքային ջրի արդյունահանման իրավունք ստանալուց հետո (5 տարվա ընթացքում) ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքի Սարատովկա գյուղի վարչական տարածքում ձեռք բերել հողակտոր և կառուցել հանքային ջրի շշալցման գործարան իր ենթակառուցվածքներով:

Այդ հարցի շուրջ ընկերությունը բանակցել է Տաշիր համայնքի և բնակավայրի ղեկավարների հետ, ոորնք պատրաստակամություն է հայտնել ընկերությանը տրամադրել Ձորագետի հանքային ջրերի հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքի հարևանությամբ 0.6հա հողատարածք:

Տրամադրվող տարածքի հողի նպատակային և գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի և հասարակական կառուցապատման է: Արդյունահանման իրավունք ստանալուց և հողակտորը ձեռք բերելուց հետո սահմանված կարգով կիրականացվի հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն:

Ելնելով հանքային ջրի շշալցման արտադրողականությունից՝ կառուցվող շշալցման գործարանի նախնական չափսերը իր ենթակառուցվածքներով (շշալցման արտադրամաս, հումքի և պատրաստի արտադրանքի պահեստներ, ադմինիստրացիա, լաբորատորիա, ճաշարան, հանգստի սենյակ, հանդերձարան, սանհանգույց և այլն) կկազմի $28.0մ \times 50.0մ = 1400.0մ^2$:

Գործարանի վերջնական չափսերը կճշտվեն հանքավայրի արդյունահանման իրավունքը ստանալու հետո՝ շինարարական աշխատանքների նախագծի կազմման ընթացքում: Գործարանը հազեցած կլինի ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով: Գործարանի համար անհրաժեշտ սարքավորումները և տեխնիկական ձեռք են բերվելու Չինաստանում և համապատասխանելու են միջազգային ստանդարտներին:

Նախատեսվող գործարանի կառուցման, ժամանակակից սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերման և այլ անհրաժեշտ աշխատանքների համար նախնական նախատեսվում է կատարել 58 000 000 դրամ գումարի չափով ներդրում (տե՛ս ներդրումների նախահաշիվը): Համայնքում ստեղծվելու է մոտ 10 աշխատատեղ՝ 200000 դրամ միջին աշխատավարձով:

Մինչ շշալցման գործարանի կառուցումը «ԱԿԲՈՒ» ՍՊ Մինչ շշալցման գործարանի կառուցումը «ԱԿԲՈՒ» ՍՊ ընկերությունը պայմանագրային կարգով շշալցման գործունեությունը կիրականացնի Երևան քաղաքում գտնվող՝ «Յունիոն» ՍՊԸ շշալցման

գործարանի տարածքում, որտեղ ընկերությունը կատարում է քաղցրահամ ջրի և ըմպելիքների շշալցում (տե՛ս հավելված 3-6):

Հանքավայրի թիվ 2ՔԾ հորատանցքից դեպի շշալցման գործարան հանքային ջրի տեղափոխումն կիրականացվի «Յունիոն» ՍՊԸ պատկանող ԿԱՄԱԶ 53229 մակնիշի բեռնատար մեքենայով՝ կահավորված չժանգոտվող պողպատից պատրաստված 13.2տ տարողությամբ ցիստեռնով:

Գործարանը համալրված է իտալական, գերմանական, լեհական, ֆրանսիական, չինական և ռուսական առաջատար ընկերությունների նորագույն բարձրորակ սարքավորումներով:

Ներկայումս գործարանում շշալցվում են PET տիպի պլաստիկ շշեր՝ 0.5 լիտր, 1.0 լիտր, 1.5 լիտր տարողունակությամբ, ինչպես նաև 0.33 լիտր ծավալով ապակե տարաներ:

Գործարանում տեղադրված ժամանակակից սարքավորումների հզորությունները լիովին բավարարում են իրականացնել նաև հանքային ջրի շշալցում:

«ԱԿԲՈՒ» ՍՊ ընկերությունն շշալցված հանքային ջուրը իրացնելու է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ջրհավաք հորատանցքն իր գլխամասային սարքավորումներով շրջափակվելու է մետաղական կամ քարը ցանկապատով (սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտի) և ապահովվելու է պահպանությամբ:

Մինչև շշալցման գործարանի կառուցումը և գործունեության իրականացումը՝ համաձայն գործող օրենսդրության, կգնահատվի հողաբուսաշերտի հզորությունը, այն կկտրվի, կտեղափոխվի համապատասխան վայր, ապա կօգտագործվի հետագա ռեկուլտիվացման աշխատանքներում: Հողային և շինարարական աշխատանքների ծավալների մասին տեղեկատվությունը կտրվի գործարանի նախագծում, որը սահմանված կարգով հանքային ջրի արդյունահանման իրավունքը ստանալուց հետո կներկայացվի բնապահպանական փորձաքննության:

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից, գոյություն ունեցող ենթակառուցվածքներից (ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և այլն):

Ինչպես արդեն նշվել է ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 1.66 լ/վրկ կամ 52349.8 մ³/տարի:

Հանքային ջրից ազատ ածխաթթու գազի կորզում չի նախատեսվում, քանզի թիվ 2ՔԾ հորատանցքում ազատ գազի պարունակությունը հանքային ջրում կազմում է ընդամենը 1.06գ/լ:

Ազատ ածխաթթու գազը ընկերությունը կգնի Լիճքի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրից, որտեղ տարբեր ընկերությունների կողմից իրականացվում է ազատ ածխաթթու գազի կորզում ու կատարվում է 40.0 լիտրանոց բալոնների լիցքավորում, որի յուրաքանչյուրի տարողությունը կազմում է 20.0 կգ ածխաթթու գազ:

Շշալցման արտադրամասի տեխնիկական հագեցվածությունը, ջեռուցման և օդափոխման համակարգերը և այլն, կհամապատասխանեն նմանատիպ արտադրությունին ներկայացվող տեխնիկական նորմերին ու պահանջներին և դրանց օգտագործումը շրջակա միջավայրի վրա չի ունենա բացասական ազդեցություն:

«ԱԿԲՈՒ» ՍՊԸ-ի գործունեությունից բխող որևէ խնդիր չի առաջանա՝ կապված պատրաստի արտադրանքի տեղափոխման համար օգտագործվող հանրային ճանապարհների, երթևեկության լրացուցիչ բեռնվածության, աշխատանքի անվտանգության և այլնի հետ:

Շատրվանող ջրհավաք հորատանցքից հանքային ջուրը գազանջատիչից հետո 76 մ կամ 89 մ տրամագծի չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով երկրի մակերեսով կտեղափոխվի գործարանի շշալցման արտադրամաս, որտեղ կիրականացվի հանքային ջրի շշալցում:

Նախատեսվում է կառուցվող գործարանի հանքային ջրի շշալցման արտադրամասում տեղադրել երկու հատ շշալցման հոսքազիծ՝ ապակյա 0.5 լիտրանոց և պլաստմասյա 1.5 լիտրանոց տարաներում շշալցման համար, որի յուրաքանչյուրի արտադրողականությունը կազմում է 12000 հատ շիշ մեկ ժամում:

Ստորև աղյուսակներում բերված են շուկայի պահանջարկից ելնելով տարբեր տարողությամբ շշալցման տարաների և աշխատանքային ռեժիմի դեպքում շշալցվող հանքային ջրի քանակները:

Տարբեր տարաների դեպքում մեկ հերթափոխով աշխատելու ժամանակ կշշալցվի՝

Շշի տարողությունը, լիտր	Օրական շշալցվող շշի քանակը, հատ	Օրական շշալցվող հանքային ջրի քանակը, մ ³	Ամսական շշալցվող շշի քանակը, հատ	Ամսական շշալցվող հանքային ջրի քանակը, մ ³	Տարեկան շշալցվող շշի քանակը, հատ	Տարեկան շշալցվող հանքային ջրի քանակը, մ ³
0.5	84000 (12000x7ժամ)	42.0 (84000x0.5)	2 100 000 (84000x25)	1050.0 (42.0x25 օր)	25 200 000 (2100000x12)	12600.0 (1050.0x12)
1.5	84000 (12000x7ժամ)	126.0 (84000x1.5)	2 100 000 (84000x25)	3150.0 (126x25 օր)	25 200 000 (2100000x12)	37800.0 (3150.0x12)

Տարբեր տարաների դեպքում երկու հերթափոխով աշխատելու ժամանակ կշռացվի՝

Շժի տարո-դու-թյունը, լիտր	Օրական շժացվող շժի քանակը, հատ	Օրական շժացվող հանքային ջրի քանակը, մ ³	Ամսական շժացվող շժի քանակը, հատ	Ամսական շժացվող հանքային ջրի քանակը, մ ³	Տարեկան շժացվող շժի քանակը, հատ	Տարեկան շժացվող հանքային ջրի քանակը, մ ³
0.5	168000 (12000x14ժամ)	84.0 (168000x0.5)	4 200 000 (168000x25)	2100.0 (84.0x25 օր)	50 400 000 (4200000x12)	25200.0 (2100.0x12)
1.5	168000 (12000x14ժամ)	252.0 (168000x1.5)	4 200 000 (168000x25)	6300.0 (252x25 օր)	50 400 000 (4200000x12)	75600.0 (6300.0x12)

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքով հաշվարկված և հաստատված հանքային ջրի պաշարի արդյունավետ և պատշաճ շահագործման համար «ԱԿԲՈՒ» ՍՊԸ-ն նախատեսնում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1. Իրականացնել ջրհավաք հորատանցքերի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոտիզոլյացիա, որը կբացառի մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք:
2. Շատրվանող ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կկահավորվի համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ (տե՛ս հանքային ջրի ջրհավաք հորատանցքի գլխամասի սխեման): Սույն աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն «Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու մասին» որոշման պահանջներին համապատասխան:
3. Ջրհավաք հորատանցքի շուրջ կառուցել առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտի, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:


4. Իրականացնել հիդրոտերկրաբանական սիստեմատիկ դիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ:
5. Շատրվանող ջրհավաք հորատանցքից ջրառն իրականացնել բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար, նախատեսելով հանքային ջրի թողք, բացառելով ջրահեռացվող ջրի օգտագործման հնարավորությունը:
6. 2ՔՅ հորատանցքի մոտակայքում անհրաժեշտության դեպքում հորատել 250.0 մ-ոց նոր ջրհավաք հորատանցք՝ կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով, որպես թիվ 2ՔՅ հորատանցքի կրկնորդն: Նոր ջրհավաք հորատանցքի շահագործման ժամանակ թիվ 2ՔՅ հորատանցքը կկոնսերվացվի:
7. Հանքային ջրի գործարանի կառուցում իր ենթակառուցվածքներով:
8. Ժամանակակից սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերում ու տեղադրում:
9. Գործարանի տարածքի բարեկարգում և այլ անհրաժեշտ աշխատանքներ:

Հաշվի առնելով այն, որ ընկերությունը մեծապես կարևորում է «կորպորատիվ» սոցիալական պատասխանատվությունը, աշխատակիցների համար բերանպաստ աշխատանքային պայմաններ ապահովելը՝ պարտավորվում է ոչ միայն ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը նպաստ բերել, այլև աշխատողներին ապահովել սնունդով ու հանդերձանքով, համապատասխան հանգստի սենյակով և անհրաժեշտ կենցաղային պայմաններով (սանիտարահիգիենիկ միջավայր, սանհանգույց և այլն):

Հանքավայրի հանքային ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո ջրհավաք հորատանցքերի բերանի փականը կփակվի և կկապարակնքվի: Դրանով իսկ հանքավայրի հորատանցքը կկոնսերվացվի:

ՍԽԵՄԱ

հանքային ջրի ջրիակաք հորատանցքի գլխամասի



Պ ա յ մ ա ն կ ա ն ն շ ա ն ն ե ռ

- 1. Հորատանցքի թերան
- 2. Հորատանցքի փական
- 3. Ճնշումաչափ
- 4. Ջերմաչափ
- 5. Գազանջատիչ
- 6. Գազանջատիչի միջնապատ
- 7. Ազատ գազի ելք

- 8. Ազատ գազի ելքի խողովակ
- 9. Առաջնային ջրահաշվիչ
- 10. Առաջնային խողովակ
- 11. Թողքի փական
- 12. Տեխնիկական ջրահաշվիչ
- 13. Թողքի խողովակ

- 14. Առաջնային խողովակի փական
- 15. Առանձնացված ջրահաշվիչ (արդյունաբերական նպատակով)

7. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ (ԶՐՈՅԱԿԱՆ) ԵՎ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզի Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔԾ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման հետ կապված այլընտրանքային տարբերակը կարող է լինել նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, որը թեպետ տեսականորեն չի կարելի բացառել, այնուամենայնիվ գործնականում դրա հավանականությունը շատ ցածր է:

Սակայն բացառման դեպքում աշխատողները կկորցնեն իրենց աշխատատեղերը, ինչը չի նպաստի համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում կբարելավվի տարածաշրջանի և ազդակիր համայնքի բնակչության սոցիալ տնտեսական մակարդակը: Համայնքի բնակչության եկամուտները կավելանան շնորհիվ գոյություն ունեցող և նոր աշխատատեղերի:

Հաշվի առնելով, որ հանքային ջրի հորատանցքը ինքնաշատրվանող է, ապա նախատեսվող տարբերակից հրաժարման դեպքում օգտակար հանքային ջուրը աննպատակ կհոսի:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում կբարելավվի տարածաշրջանի և ազդակիր համայնքների բնակչության սոցիալ տնտեսական մակարդակը: Այդ համայնքների բնակչության եկամուտները կավելանան շնորհիվ աշխատատեղերի և հանքարդյունահանման աշխատակիցներին իրենց արտադրած գյուղատնտեսական մթերքների վաճառքի արդյունքում:

Որպես այլընտրանքային տարբերակ կարելի է նաև դիտարկել հանքային ջրի հորատանցքի հաստատված պաշարի օգտագործումը բուժիչ նպատակներով, ստեղծելով ռեկրեացիոն գոտի հանքային ջրի հորատանցքի շուրջ:

8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակը պետության կողմից երկրի բնակչության որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ որոշակի կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնումն է:

Հանքավայրի շահագործումը կունենա բարերար սոցիալական և տնտեսական ազդեցություն ազդակիր համայնքի առջև ծառայած տարաբնույթ խնդիրների լուծման առումով:

Ջրհավաք հորատանցքերի արդյունահանման թույլտվության գործողության տևողությունը 20 տարի է:

«ԱԿԲՈՒ» ՍՊ ընկերությունը ստանալով Ջորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔԾ հորատանցքի արդյունահանման իրավունքն՝ արդյունաբերական (շշալցման) համար և իրականացնելով այն կապահովի շուկայի պահանջարկը, կստեղծի նոր աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի տեղի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

Ընկերությունը իր պատրաստակամությունն է հայտնում, պարբերաբար հանդիպելու Տաշիր համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջը:

Հանքավայրի շահագործումը հնարավորություն կընձեռի հաղթահարելու կամ մեղմելու ազդակիր համայնքում գործազրկության հետ կապված խնդիրները, այդ համայնքում իրականացնելու տարբեր սոցիալական նախաձեռնություններ: Տարեկան կտրվածքով համայնքին կտրվի ֆինանսական աջակցություն՝ դպրոցի, մանկապարտեզի և այլնի հետ կապված խնդիրներ լուծելու նպատակով (առաջնահերթությունները կհամաձայնեցվեն համայնքի ղեկավարության և բնակիչների հետ):

Ստորև աղյուսակում ներկայացնում ենք Տաշիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների չափը և կատարման ժամկետները:

Հ/Հ	Պարտավորությունների անվանումը	Կատարման ժամկետը	Ներդրումների չափը, հազ. դրամ
1.	Լոռու մարզի Տաշիր համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	100.0
2.	Մանկապարտեզի աշխատանքներին ֆինանսական մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	80.0
3.	Դպրոցի կարիքների համար ֆինանսական մասնակցություն	Յուրաքանչյուր տարի	70.0

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան տրամադրել 100.0 հազար դրամ:

9. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՎՐԱ

Հանքավայրի թիվ 2ՔՅ հորատանցքի և ընկերության կողմից նախատեսվող ձեռք բերվող հողակտորի տարածքի մակերեսի ($375.0\text{մ}^2 + 6000.0\text{մ}^2 = 6325.0\text{մ}^2$) համար հաշվարկվում է տնտեսական վնաս:

Հաշվարկները կատարվել են ըստ ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն՝ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին», ինչպես նաև ՀՀ Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն՝ «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» որոշումների:

ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ԿԳհող} = \text{Աբազա} \times \text{Մհող} \times \text{Գգ, որտեղ՝}$$

ԿԳհող-ն գնահատվող հողամասի կադաստրային գինն է՝ արտահայտված դրամով,

Աբազա-ն հողերի 1մ^2 մակերեսի բազային արժեքն է՝ 400դրամ,

Մհող-ն գնահատվող հողամասի մակերեսն է 6325.0մ^2 ,

Գգ-ն բնակավայրերի հողերի տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցն է: Սարատովկա բնակավայրը գտնվում է XV-րդ գոտու սահմաններում, որի գոտիականության գործակիցն է՝ 0.0024 (տես կարգի Աղյուսակ 1):

$$\text{ԿԳհող} = 6325.0 \times 400 \times 0.0024 = 6072.0 \text{ դրամ}$$

Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Ա} = \text{ԾՀՎ} + \text{ԱՎՀ} + \text{ԾՈՒՎ, որտեղ՝}$$

Ա-ն ազդեցությունն է,

ԾՀՎ-ն վնասված հողամասը նախնական (նորմատիվային) տեսքի բերելու (պահանջների վերականգնման) համար անհրաժեշտ ծախսերն են: Նման ծախսեր չեն նախատեսվում:

ԱՎՀ-ն վնասված հողամասի (գույքի) արժեքն է, տվյալ դեպքում՝ ԿԳհող:

ԾՈՒՎ-ն ազդեցության հետևանքների ուսումնասիրության և վերլուծության հետ կապված ծախսերն են (տվյալ դեպքում անտեսվում է, քանի որ կատարված է ընդհանուր նախագծային աշխատանքների կազմում, առանց առանձին տողով նշելու):

$$\text{Ա} = \text{ԾՀՎ} + \text{ԿԳհող, իսկ ԱՎՀ} = 0 + 6072.0 = 6072.0 \text{ դրամ}$$

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՌԻՍԿԵՐ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Հանքավայրի շահագործման հետ կապված հնարավոր արտակարգ իրավիճակների (տեխնածին, բնածին կամ մարդածին) հարցը պետք է քննարկել մի քանի տեսանկյուններից: Բնական աղետների դեպքում դրանց բացասական ազդեցության ծավալը կախված կլինի աղետի տեսակից և ուժգնության աստիճանից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համատասխան տարածքում սողանքային, սելավային երևույթները բացակայում են, ապա հանքավայրի շահագործման և հանքային ջրի շտապման ընթացքում այդօրինակ աղետների հնարավոր ազդեցության թե՛ ծավալը, թե՛ ազդեցության աստիճանը պետք է համարել շատ ցածր: Հիմնական ռիսկը կապված է երկրաշարժերի հետ, քանի որ Հայաստանը գտնվում է սեյսմիկ գոտում: Սակայն անգամ ավերիչ երկրաշարժերի դեպքում հանքավայրի շահագործմամբ պայմանավորված լուրջ բնապահպանական ռիսկեր չեն կարող լինել, քանզի արդյունահանվող ռեսուրսը չունի վտանգավորություն, իսկ արդյունահանումը չի ուղեկցվում արտանետումներով ու վտանգավոր թափոններով, ինչպես պինդ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման դեպքում է: Տեսականորեն բացառված չի այն, որ հնարավոր ավերիչ երկրաշարժերի դեպքում (ֆորս մաժորի դեպքում) կարող են շինությունները փլուզվել և խողովակաշարերը շարքից դուրս գան, սակայն դրանց բնապահպանական հետևանքները չեն կարող վտանգավոր լինել:

Հիմնվելով սույն հաշվետվության մեջ ներկայացված բնութագրերի ու հիմնավորումների վրա՝ շրջակա միջավայրի վրա հանքավայրի շահագործման հնարավոր բացասական ազդեցությունը կարող է պայմանավորված լինել առավելապես տեխնածին կամ մարդածին արտակարգ իրավիճակներով: Սակայն դրա ռիսկը նվազագույնի հասցնելու համար «ԱԿԲՈՒ» ՍՊԸ-ն հանքավայրը շահագործելու ողջ գործընթացում խստագույնս հետևելու է անվտանգության բոլոր կանոններին և պահանջներին: Դա տեղի է ունենալու նաև պարբերաբար իրականացվող մոնիտորինգի միջոցով, որը թույլ կտա պարզել ինչպես սարքավորումների վիճակը, հրդեհանվտանգության ռիսկերը, այնպես էլ տեխնիկական անվտանգության պահանջների հանդեպ աշխատակիցների վերաբերմունքի բնութագրական գծերը: Տեխնածին և մարդածին արտակարգ իրավիճակների դեպքում ևս բնապահպանական ռիսկերը շատ ցածր են, քանզի հանքավայրի շահագործումը, ինչպես նշել ենք, չի ուղեկցվում արտանետումներով և վտանգավոր թափոններով:

Թեև, ինչպես արդեն ակնարկել ենք, սկզբունքորեն բացառված չեն տեխնածին և մարդածին այնպիսի արտակարգ իրավիճակներ, որոնք կապված կլինեն համապատասխան սարքավորումների, դրանց վթարման, ինչպես նաև հնարավոր հրդեհների հետ, այնուամենայնիվ դրանց բացասական ազդեցության հավանականությունը չի կարող մեծ լինել, քանզի համապատասխան սարքավորումներն ունենալու են բարձր որակ և լինելու են նոր ու ժամանակակից, իսկ դրանք շահագործող մասնագետները կլինեն բարձր որակավորում ունեցող: Ավելին, արտադրական ողջ գործընթացը կազմակերպվելու և իրականացվելու է արտադրական գործունեությանը ներկայացվող բոլոր պահանջներին համապատասխան: Քանի որ այդպիսի գործունեության ընթացքում հիմնականում գործ չենք ունենալու դյուրավառ հեղուկների, քիմիական նյութերի հետ, ապա հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքում դրանց բացասական ազդեցությունն ըստ էության կլինի զրոյական:

Հիմնական ռիսկը կարող է կապված լինել պլաստմասե տարաների հետ (հրդեհների մասով), սակայն նշենք, որ խստագույնս պահպանվելու են անվտանգության տեխնիկական բոլոր կանոնները և պահանջները, սարքավորումները պարբերաբար ստուգման են ենթարկվելու, իսկ աշխատակիցները սահմանված կարգով հրահանգավորվելու են: Հնարավոր հրդեհը շատ արագ կլուրկալիզացվի ու կչեզոքացվի: Իսկ պլաստմասե տարաների պահեստային հատվածում հրդեհի հնարավորության ռիսկերն անվտանգության նկատառումներով կդարձվեն գրեթե զրոյական:

Ի հավելումն ասվածի՝ նշենք, որ հանքային ջրի ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքների անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկայի հրահանգի բոլոր պահանջները:

Ընկերության ղեկավարությունը պարտավոր է՝

- Աշխատանքի ընդունվող բոլոր աշխատողների հետ անցկացնել նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ:
- Երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:
- Տրանսպորտային մեքենաների և արտադրական սարքավորումների ղեկավարումը թույլատրել այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաների կամ սարքավորումների: ղեկավարման իրավունքի վկայական:

Արտակարգ իրավիճակներ կարող են պայմանավորված լինեն երկրաշարժով (հաշվի առնելով, որ հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում). հրդեհներով

(կապված մարդածին գործունների հետ) և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններով:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Արտադրական հրապարակումն կենցաղային նշանակության վազոն-տնակներում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Արտադրական տարածքի հատուկ հատկացված վայրերում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում, նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- կրճատվում է միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակը:
- դադարեցվում են աշխատանքները

Հանքավայրի շահագործման ընթացքում գումարային (կոմուլյատիվ) ազդեցություններ չեն առաջանում, քանի որ հանքավայրի հարակից տարածքներում բացակայում են գումարային ազդեցություն առաջացնող գործունեություններ:

Ընկերության արտադրական հրապարակում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակակ կապ), որով հնարավոր է արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ:

11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես նշել էինք «ԱԿԲՈՒ» ՍՊԸ-ը ընկերությունը նպատակ ունի հանքային ջրի արդյունահանման իրավունք ստանալուց հետո (5 տարվա ընթացքում) ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքի Սարատովկա գյուղի վարչական տարածքում ձեռք բերել հողակտոր և կառուցել հանքային ջրի շշալցման գործարան իր ենթակառուցվածքներով: Գործարանը հազեցած կլինի ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով:

«ԱԿԲՈՒ» ՍՊԸ-ն ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՔԾ հորատանցքով հաշվարկված և հաստատված հանքային ջրի պաշարի պատշաճ շահագործման, հանքային ջրի շշալցման արտադրության կազմակերպման, ինչպես նաև միջազգային շուկա դուրս գալու համար նախատեսում է Չինաստանից ձեռք բերել հանքային ջրի շշալցման ժամանակակից արտադրական սարքավորումներ և տեխնիկա:

Գործարանի կառուցման, ժամանակակից սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերման և այլ անհրաժեշտ աշխատանքների համար «Յունիոն» ՍՊԸ-ն նախատեսում է կատարել 58 000 000 դրամ գումարի չափով ներդրում (տե՛ս ներդրումների նախահաշիվը):

Աշխատանքներն իրականացվելու են հիմնականում տեղի աշխատուժի ներգրավմամբ: Նախատեսվում է ստեղծել մոտ 10 աշխատատեղ՝ 200000.0 դրամ միջին աշխատավարձով:

Ընկերությունը ստանալով Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունահանման իրավունքն և իրականացնելով այն կապահովի շուկայի պահանջարկը, կստեղծի նոր աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի Լոռու մարզի Տաշիրի համայնքի և Սարատովկա գյուղի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ/Հ	Աշխատանքների և ծառայությունների անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի գինը, դրամ	Գումարը, դրամով
1	2	3	4	5	6
1	Ջրհավաք հորատանցքի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա	հատ	1	150000	150 000
2	Ջրհավաք հորատանցքի գլխամասի կահավորում (սարքավորումների ձեռքբերում և տեղադրում)	հատ	1	1300000	1 300 000
3	Մանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտու կառուցապատում	հատ	1	1800000	1 800 000
4	Հանքային ջրի, հողային ծածկույթի, մթնոլորտային օդի և կենսաբազմազանության դիտարկումների կատարում	շուրջ-տարյա	1	1500000	1 500 000
5	Վարչա-արտադրական համալիրի կառուցում	հատ	1	16000000	16 000 000
6	Անհրաժեշտ ժամանակակից արտադրական սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերում և տեղադրում	հատ	1	35000000	35 000 000
7	Գործարանի տարածքի բարեկարգում և այլ աշխատանքներ	հատ	1	2000000	2 000 000
8	Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ընկերության ստանձնած պարտավորություններ	տարեկան	1	250000	250 000
9	Ընդամենը՝	դրամ			58 000 000

«ԱԿԲՈՒ» ՍՊԸ տնօրեն՝

Հ. Գաբրիելյան

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ	Մեղման համար պատասխանատու
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - աշխատողներն ապահովվում են բանվորական արտահագուստով և օրը մեկ անգամ սնունդով - աշխատողների հետ անցկացվում է նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ - երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացվում է հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով - տրանսպորտային մեքենաների և արտադրական սարքավորումների ղեկավարումը թույլատրվում է այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաների կամ սարքավորումների ղեկավարելու իրավունքի վկայական 	<ul style="list-style-type: none"> - աշխատողներին ապահովել բանվորական արտահագուստով և օրը մեկ անգամ սնունդով - աշխատողների հետ անցկացնել է նախնական ուսուցում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ - երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով - տրանսպորտային մեքենաների և արտադրական սարքավորումների ղեկավարումը թույլատրել այն անձանց, որոնք անցել են հատուկ ուսուցում և ունեն այդ մեքենաների կամ սարքավորումների ղեկավարելու իրավունքի վկայական 	«ԱԿԲՈՒ» ՍՊԸ տնօրեն
2. Հորատանցքի շահագործման աշխատանքներ	Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	- փոշեզոյացման կանխում հանքային ջրի շահագործման ժամանակ	- փոշու և վնասակար ծխազագերի արտանետումներ չեն լինելու	ինժեներ-հիդրոերկրաբան

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ	Մեղման համար պատասխանատու
	Աղմուկ	<ul style="list-style-type: none"> - օգտագործվող տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ 	<ul style="list-style-type: none"> - ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորել համապատասխան սարքավորում-ներով (փականներ, ջրաչափեր, գազանջատիչ, չափիչ սարքեր ճնշումաչափ, ջերմաչափ) - ջրհավաք հորատանցքերի շուրջ կառուցել առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտի - հանքի տեխնիկան և մեքենաների շահագործում առանց հավելյալ արտանետումների 	
3. Հողային աշխատանքներ	- բուսականության կորուստ հողաբուսական շերտի խախտման արդյունքում	- հողի բուսական շերտի հեռացում և ժամանակավոր կուտակում տարածքի ռեկուլտիվացման համար	<ul style="list-style-type: none"> - աշխատանքային ժամերից հետո աշխատող սարքավորումների բացառում - մոտակայքի բնակիչներից բողոքների բացառում 	ինժեներ-հիդրոերկրաբան
3. Հողային աշխատանքներ	- բուսականության կորուստ հողաբուսական շերտի խախտման արդյունքում	- հողի բուսական շերտի հեռացում և ժամանակավոր կուտակում տարածքի ռեկուլտիվացման համար	<ul style="list-style-type: none"> - խախտված հողերի ռեկուլտիվացիա սանիտարական գոտու վերանորոգման աշխատանքների ավարտից հետո 	ինժեներ-հիդրոերկրաբան
4. Կենցաղային թափոնների գոյացում	- աշխատանքների կատարման վայրում սանիտարահիգիենիկ պայմանների վատացում	- աշխատանքային վայրի տարածքում զուգարանի տեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան	- աշխատանքային վայրի տարածքում պատշաճ սանիտարական պայմաններում գտնվող զուգարանների առկայություն	սպասարկող անձնակազմ

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ	Մեղման համար պատասխանատու
5. Բանեցված յուղերի հեռացումից գոյացող թափոններ	- հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտման վտանգ	- յուղերի անվտանգ փոխանցում - լիցենզավորված կազմակերպությանը	- փոխարինված յուղերը պատշաճ կերպով պահեստավորված են - փոխարինված յուղերը հեռացված են լիցենզավորված կազմակերպության կողմից	Ինժեներ-երկրաբան
6. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	- ուղղակի և անուղղակի վտանգներ երթևեկությանը և հետիոտներին աշխատանքների ժամանակ	- երթևեկության կառավարման համակարգ և անձնակազմի ուսուցում	- աշխատանքների հստակ տեսանելի տարածք - կարգավորված երթևեկություն	Ինժեներ-երկրաբան
7. Շինարարական աշխատանքներ	- հողերի խախտում - բուսածածկի խախտում - շինարարական աղբի առաջացում -	- Լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա - Աղբի հեռացում կազմակերպված աղբավայրերի տարածք, աղբահանության պայմանագրի կնքում	- Հարթեցված, հարթագծված մակերևույթ - Կանաչապատված տարածք - Գործարանի և հանքավայրի տարածքում շինարարական աղբի բացակայություն	«ԱԿԲՈՒ» ՍՊԸ տնօրեն

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Գործողություն	Ի՞նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)	Ո՞վ է (պատաս- խանատու մոնիտորինգի համար)
1. Փոշի և ծխագազերի արտանետումներ շինարարական փուլում և մեքենաների տեղաշարժի ժամանակ	օդի որակ	հանքավայրի և գազի կորզման արտադրամասի տարածքում, ճանապարհ	գործիքային չափումներ	պարբերական	նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար	համապատաս- խան արտոնա- գրված կազմա- կերպություն
2. Աղմուկ	- աշխատանքային ժամերի պահպանում - ավտոմեքենաների և տեխնիկայի տեխնիկական վիճակը - աղմուկի մակարդակը (բողոքների դեպքում)	հանքավայրի և գազի կորզման արտադրամասի տարածք, շինարարական աշխատանքների տարածք	գործիքային չափումներ	պարբերական	նվազեցնել անհարմարությունները անձնակազմի և հարևան համայնքների համար	ինժեներ- հիդրոտեղաբան
3. Ավտոմեքենաների և տեխնիկայի սպասարկում	- ավտոմեքենաների և տեխնիկայի լվացում համապատասխան ավտոլվացման կետերում	հարակից համայնքներ	-	-	Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից	սպասարկող անձնակազմ

Գործողություն	Ի՞նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)	Ո՞վ է (պատաս- խանատու մոնիտորինգի համար)
4. Հողային աշխատանքներ	- Շինարարության ժամանակ հողի վերին շերտի հեռացում և ժամանակավոր կուտակում տարածքի ռեկուլտիվացիայի համար	սանիտարական գոտու տարածքում	աշխատանքների հսկում	հողային աշխատանքների ընթացքում	սահմանափակել բուսականության կորուստը հողի կուտակման հետևաքով	ինժեներ- հիդրոերկրաբան
5. Աշխատողների առողջություն և անվտանգություն	- աշխատողների կողմից համազգեստի կրումը - սարքավորումների շահագործման օգտագործման կանոնների խիստ պահպանում	շահագործման տարածք	աշխատանքների գնում	աշխատանքների ողջ ընթացքում	Կրճատել աշխատա- վորների կողմից վնասվածքների ստացման և պատահարների հավանականությունը	«ԱԿԲՈՒ» ՍՊԸ տնօրեն
6. Սարքավորումների շահագործում և պահպանում	- յուղերի հավաքման միջոցների առկայություն տարածքում թափված և արտահոսած յուղերը մաքելու համար - արտահոսած և պատահաբար թափված յուղերի ժամանակին մաքրում	գազի կորզման արտադրամասի տարածք	տարածքի գնում	շահագործման աշխատանքների ողջ ընթացքում	- տարածք մտնող անձնակազմի և այլ մարդկանց առողջության համար վտանգների կանխում - սարքավորումների շահագործման ու պահպանության հետևանքով նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից խուսափում	«ԱԿԲՈՒ» ՍՊԸ տնօրեն

Գործողություն	Ի՞նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)	Ո՞վ է (պատաս- խանատու մոնիտորինգի համար)
					- հրդեհի դեպքում վնասի ժամանակին տեղայնացում ու նվազեցում	

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА
Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки
Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Լճերի մարզպետարանի պաշտոնական կայք

ՀՀ Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ
Բնական բուժական ռեսուրսների ուսումնասիրման և էկոլոգիական բժշկության կենտրոն

Արձանագրություն թիվ N° 49/2021

Պատվիրատուի անունը, իարավարանական հասցեն «ՅՈՒՆԻՈՆ» ՍՊԸ					
Փորձարկվող նմուշ՝ հանքային ջուր		Նմուշառման ամսաթիվ՝ «29.09.2021» թ.		Ակտի համար՝ N°49/2021	
Հորատանցքի գտնվելու վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, Սարատովկա գյուղի 2ԷՈ հորատանցքի հանքային ջուր		Հորատանցքի անվանումը կամ համարը՝ ՀՀ Լոռու մարզ, Սարատովկա գյուղի 2ՅՔ հորատանցքի հանքային ջուր			
Զգայաբանական բնութագրիչներ և ցուցանիշներ	Չափման միավոր	ՄԹԿ և ևտրմեր	Փաստացի տվյալներ		
Հոտը, 20° C-ում	բալ		1-3		
Հոտը մինչև 60°C տաքացնելիս	բալ		1-3.5		
Համր	բալ		Հանքային ջրին բնորոշ		
Գույներ	աստիճան		2-3		
Պղտորություն	ՖՄՊ (NTU)		1.5		
Կոշտություն	Ջ	մմոլ/լ	36,4		
Ջրածնային ցուցիչ (рН)			6.7-7.0		
Կատիոններ	Իոնա-ադային կազմ		մգ/դմ³	մգ-էկվ./դմ³	Էկվ.% (K) = 2,187
	Լիթիում	Li ⁺	0.1		(Na+K)-0.31մմոլ/լ
	Ամոնիում	NH ₄ ⁺	չի հայտն.		
	Կալցիում	Ca ²⁺	31.37	0,78	20,3675
	Նատրիում	Na ⁺	196,09	8,53	
	Մագնեզիում	Mg ²⁺	282,11	23,2	50,75
	Կալցիում	Ca ²⁺	264,5	13,2	28,87
	Կոշտություն	Ջ մմոլ/լ		36,4	
	Ստրոնցիում	Str ²⁺	-		
	Նոբրիդ երկաթ	Fe ²⁺	0,04		
	Մանգան	Mn ²⁺	<0.1		
	Պղինձ	Cu ²⁺	<0.3		
	Կոբալտ	Co ²⁺	<0.1		
	Կապար	Pb ²⁺	0,0006		
	Յինկ	Zn ²⁺	չի հայտն.		
	Կադմիում	Cd ²⁺	<0.001		
	Սնդիկ	Hg ²⁺	չի հայտն.		
	Քրոմ(զումարային)	Σ(Cr ³⁺ +Cr ⁶⁺)	-		
	Մոլիբդեն	Mo ²⁺	-		
	Ալյումինիում	Al	0.4		
	Վանադիում	V	<0.1		
	Նիկել	Ni	0.32		
	Տիտան	Ti	0.16		
	Արգենտում	Ag	<0,015		
	Բերիլիում	Be	չի հայտն.		
	Բոր	B	-		
	Բարիում	Ba ²⁺	չի		
	Կատիոնների զումարը		774,1	45,71	100
Անիոններ	Ֆտորիդներ	F	0.23		
	Քլորիդ	Cl	207,39	5,874	12,8
	Բրոմիդ	Br	<0.1		
	Յոդիդ	I	<0.25		
	Սուլֆատ	SO ₄ ²⁻	413,14	8,67	79,9 (50.0)
	հիդրոկարբոնատ կարբոնատ	HCO ₃ ⁻ CO ₃ ²⁻	1903,2	31,2	68,3
	Նիտրիտ	NO ₂ ⁻	չի հայտն.		
	Նիտրատ	NO ₃ ⁻	չի հայտն.		
Անիոնների զումարը		2523,73	45,71	100	



Չդիտարկված մոլեկուլներ		մգ /ղմ ³
Ածխաթթու գազ (լուծված)	CO ₂	1078,0
Մետասիլիկաթթու	H ₂ SiO ₃	116,85
Օրթոօրոթաթթու	H ₂ BO ₃	7,087
Գյուղիղներ		
Արսեն	As ISO6569	0,015
Օրթոօրոթաթթու	H ₂ BO ₃	7,087
Պերմանգանատային օքսիդացում, O ₂ մգ /ղմ ³		1,04
Ընդհանուր հանքայնացում, M		3297,8
Չոր մնացորդ 180°C-ում		2400,0
Չոր մնացորդ 260°C-ում		2100,0
Չոր մնացորդ 450°C-ում		1900,0
Օրգանական կոմպոնետներ (զուսմարային C _{org})		0,36
Լրացուցիչ բաղադրիչներ:		
Ֆորմալդեհիդ HCOH		չի հայտն.
Նավթենաթթուներ		0,4
Ֆենոլ C ₆ H ₅ OH		չի հայտն.

Գուտլովի ֆորմուլա M 3,3 $\frac{HCO_3 68,3 SO_4 \sim 20(19,9)}{Mg 50,75 Ca 28,87 (Na+K) 20,36}$ pH-6.7-7.0

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ: 22 Լոռու մարզ, Մարտոսկա գյուղի 2ՁՔ հորատանցքի հանքային ջուր - նմուշառված փորձանմուշը թույլ թթվայինից չեզոքից (pH 6,7-7,0) միջավայրով, միջին հանքայնացված (M 3,3 գ/ղմ³), հիդրոկարբոնատ-սուլֆատային, մագնեզիում-կալցիում-նատրիումային բաղադրության հանքային ջուր է: Թունավոր նորմատիվային բաղադրիչներ՝ կենսաբանական ակտիվ կոմպոնետներ, ինչպես նաև անվտանգության ցուցանիշները՝ ծանր մետաղները (Pb, Hg, Cd, As, Sr, Al, Cr, Ni, Zn, Cu) հայտնաբերված չեն կամ ցածր են խմելու ջրերի ՍԹԿ ներից: Համարվում է Ռուսաստանի դաշնության Գիտլվոդսկ թիվ 5, Արշանի թիվ 26 հորատանցքերի հանքային ջրերի նմանակը: Ներկայացված փորձանմուշի համալիր հետազոտության արդյունքները համապատասխանում են ԵԱՏՄ 044/2017 «Փաթեթավորված խմելու ջրերի ներառյալ հանքային ջրերի անվտանգությանը ներկայացվող պահանջներ» Տեխնիկական պայմաններին: Կարելի է շշայցնել որպես բնական բուժիչ սեղանի հանքային ջուր:

Գենտրոնի ղեկավար

Վ. Մայսուրյան Կ. Մայսուրյան

քիմիկ վերլուծաբան

Մ. Ստեփանյան Մ. Ստեփանյան

քիմիկ օրգանիկ

Ն. Եզեկյան Ն. Եզեկյան

Ա. Հովհաննիսյան Ա. Հովհաննիսյան



01.10.2021



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2024-06-10

«ԱԿՐՈՒ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 21.110.1392886

Հիմնադրման տարի 2024

Գրանցման ամսաթիվ 2024-06-10

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 54803083

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 07630825

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովարդի ծածկագիր) 40512886

Էլ. փոստ -

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ. / Տ / 2/27 ԴԻԼԻՋԱՆ 3901 ԴԻԼԻՋԱՆ ՏԱՎՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս 091760222

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԻԵԼՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ

Անձնագրային տվյալներ 014756852 2022-02-18 036

Հասցե ԱՆԴՐԱՆԻԿԻ 2 ՆՐՔ. / Տ / 27 ԴԻԼԻՋԱՆ 3901 ԴԻԼԻՋԱՆ ՏԱՎՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆ

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը << դրամով՝ **30,000.00**

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը << դրամով
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԻԵԼՅԱՆ ՈՈՒԵՐՏԻ Անձնագիր հ/հ 0147566852 2022-02-18 տրվ. 036 ի կողմից ՀԾՀ 2511760312 Հասցե՝ ԱՆԴՐԱՆԻԿԻ 2 ՆՐՔ. / Տ / 27 ԴԻԼԻՋԱՆ 3903 ԴԻԼԻՋԱՆ ՏԱՎՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆ	2024-06-10	50 %	15000
ԻՌԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱԴԻՄԻՐԻ Անձնագիր հ/հ 009205717 2018-01-16 տրվ. 010 ի կողմից ՀԾՀ 7214720140 Հասցե՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ Փ. / Տ / 12/1 ՆՈՐԲ-ՄԱՐԱՇ 0009 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2024-06-10	50 %	15000

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
------------------	-----------------

Քաղվածքը տրամադրող՝

Արարատ_ՇԵՐՄԻՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ ՅՈՒՐԻԿԻ

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝

2024-06-10



ԿԿԱՅԱԿԱՆԸ ՏՐԿԱԾ Է _____ ԱՆՇԻՄԱՆԱՐԱՅԱՆ Ե _____ ԻՐԱԿՈՒՆԵՐՈՎ
(անփակնառնության կամ օգտագործման)

« Հուլիսի » _____ ԿՄԻՔԸ
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

« Հրեան, նոր նորմ » _____ համայնքի գրավիչ և սպառող _____
(անշարժ գույքի գտնվելու վայրի (հասցեն), անվանումը)

« Մ/Ք _____ համայնքի գրավիչ շինարարներ _____ ԵԿԱՏԱՄԱՐ

ՆՆ պեղ ունի համայնքի _____ և _____
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

ԲՆՈՒՄ ԿՐԱ
ՎՈՅՄԱՆԱՐԱՅՈՒՄ 220201, ԲՆՈՒՄ 139, ԳՐԱՆՈՒՄ 2001, ԲՆՈՒՄ 139-2001, ԳՐԱՆՈՒՄ 23090, ԲՆՈՒՄ 360202, ԲՆՈՒՄ 4-2184, ԳՐԱՆՈՒՄ 23090, ԲՆՈՒՄ 121102, ԳՐԱՆՈՒՄ 2095-Վ
ԳՐԱՆՈՒՄ 18, ԳՐԱՆՈՒՄ 121102, ԳՐԱՆՈՒՄ 3-1244, ԳՐԱՆՈՒՄ 63-1244
ԳՐԱՆՈՒՄ 230304, ԳՐԱՆՈՒՄ 230304, ԳՐԱՆՈՒՄ 230304, ԳՐԱՆՈՒՄ 230304, ԳՐԱՆՈՒՄ 230304

ԳՐԱՆՈՒՄ Ե ԳՐԱՆՈՒՄ ԳՐԱՆՈՒՄ ԳՐԱՆՈՒՄ ԳՐԱՆՈՒՄ ԳՐԱՆՈՒՄ
ԱՆՇԱՐՁ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ, ԳՈՒՅՔԻ ԵԿԱՏԱՄԱՐ
ԻՐԱԿՈՒՆԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
3-1 ՄԱՏԱՆԻ 100 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:


ՍՈՒՅՆ ԿԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐԿՈՒՄ Է ՄԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՄԸ ՊԱՐԿՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԼՆԹԵՐ ԱՆՇԱՐՁ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԼՆԹԵՐ ԱՆՇԱՐՁ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
ԵԿԱԿԱՐ _____
(ստորագրությունը)

Կ. Տ. « 02 » _____ 04 _____ 2004 թ.

1403866




1882 265 *[Signature]* 2005030303
 400000 *[Signature]* 2005030303



U.S. Fish and Game Commission
 26000000

1:200

Элементарный проект



ЕУСІА 765 *[Signature]* ЗУДУСРЗУС
УУСУСРЗ *[Signature]* ЗУУМРЗМБЗУС

1-18 Зупт

33, 17

1,34

5,02

8,16

8,05

5,07

$\frac{1}{1344,1}$

41, 23





ԱՏԱԿԱՐԱՎԱԵՐՈՒՄ ԱԿՏԻ ՉՈՐՀԱՆՈՒՄԻ
ՉԵԿԱԿԱՐԳ

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

1:200
(մասշտաբ)

ԱՐՏԱԴՐԱՄԱՍ 1

ՄԵԿԱՏԻԿԱԿԱՆ արհեստագրություն



գրադրվել է Տառ Ծ
առանցքի հերթի

ԱՄԵՐ ԾՅՏԱԿԱՆ ԳՐԱԴՐՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԻՔԱՆՈՒՅԱԿ
(ստորագրություն)



ՀՈՂԱՍԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ _____
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Ջեմալաբեկյան
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Վեֆեյի շինարարական կազմակերպություն
 ՀՈՂԱՍԱՍԻ ԶԱՓԸ (հա) Չ. 6586
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ Անիբաբեկյան

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ _____
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Արշակունյաց
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Արշակունյացի համայնքի
 ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) 5700,7
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ Անիբաբեկյան

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Գ/Գ	ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ
1.		Բոֆե	3261	անի
2.		Պրոսպեկտ	9,4	անի
3.		Արշակունյացի թիվ 1	454,7	անի
4.		Պրոսպեկտ	271	անի
5.		Արշակունյացի	4240	անի
6.		Վր. Արշակունյացի	222,7	անի


Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ _____

Կատարողներ՝ Ա. Արշակունյացի
 (ստորագրությունները)




Բ. Բ. Վ. Արշակունյացի

Շշալցման հոսքազիծ



Եշտեցման հարստագիծ



ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 19/07-2024
Ծառայությունների մատուցման

ք. Երևան

19.07.2024թ.

«ԱԿԲՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 07630825, հասցե՝ ՀՀ, 3901, ք. Դիլիջան, Անդրանիկի փ. 2/27), ի դեմս տնօրեն **Հարություն Գաբրիելյանի**, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, որն այսուհետ կանվանվի նաև «Պատվիրատու», մի կողմից, և **«Յունիոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** (ՀՎՀՀ՝ 02508347, հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Սարյան 26/2), ի դեմս տնօրեն **Թադևոս Հովսեփյանի**, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, որն այսուհետ կանվանվի նաև «Կատարող», մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է իրեն պատկանող տրանսպորտային միջոցով ԿԱՄԱԶ 53229, որի վրա տեղադրված է 13.2 տոննայանոց ոչ ժանգոտող ցիստերն կատարել Պատվիրատուի հանձնարարությունները՝ կապված Տաշիրի շրջանի, Սառատովկա գյուղից 2ՔԾ հանքային աղբյուրից ջուրը տեղափոխելը դեպի Յունիոն ՍՊԸ-ին պատկանող շշալցման գործարան և շշալցնել պլաստիկ շշերի 0.5 և 1.0 լ տարողության մեջ :

1.2. Կատարողը հեռախոսային կապի կամ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված նամակի միջոցով ստանալով ջրի փոխադրման հայտը՝ պարտավոր է ամենաուշը հաջորդ օրը իրականացնել հայտում նշված ծավալի ջրի փոխադրումը Պայմանագրով նշված հասցեով:

1.3. Շշալցումը կատարվում է Պատվիրատուի կողմից կողմից մշակված դիզայնով շշերի մեջ, ինչպես նաև Պատվիրատուի կողմից մշակված դիզայնով պիտակներով, որտեղ նշված է Պատվիրատուի և Կատարողի մասին տեղեկությունները:

1.4. Յուրաքանչյուր ամսվա համար կատարված փոխադրման փաստը, ինչպես նաև Կողմերի միջև փոխադարձ հաշվարկները հաստատվում են մատուցված ծառայությունների ընդունման-հանձնման համապատասխան ակտով կամ կողմերի միջև ստորագրված հաշվով:

1.5. Կողմերն իրենց գործունեության ժամանակ պետք է առաջնորդվեն Պայմանագրի դրույթներով և ՀՀ օրենսդրությամբ:

2. Ծառայությունների արժեքը և վճարման կարգը

2.1. Մեկ գազավորված շշալցված 0.5լ շշի արժեքը կազմում է 120(մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ը: Մեկ գազավորված շշալցված 1.50լ շշի արժեքը կազմում է 170(մեկ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ը:

2.2. Յուրաքանչյուր առաքման համար Կատարողը դուրս է գրում էլեկտրոնային հարկային հաշիվ սահմանված կարգով:

2.3. Ծառայության արժեքները կարող են փոփոխվել երկու կողմերի գրավոր համաձայնությամբ:

3. Կողմերի պարտականությունները

3.1. Կատարողը պարտավորվում է.

3.1.1. Պատվիրատուի հայտը ստանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում հաստատել կամ մերժել այն՝ մերժման դեպքում նշելով այն կատարելու իր համար ընդունելի

Ժամկետները: Հայտի հաստատման պահից այն համարվում է կատարման ենթակա, և Կողմերից որևէ մեկի հրաժարումը կարող է տուգանքի վճարման հիմք հանդիսանալ:

3.1.2. Կատարողը պարտավորվում է փոխադրման ծառայությունն իրականացնել Պայմանագրով նշված ճիշտ հասցեով և հանձնել այն ընդունելու իրավասություն ունեցող սուբյեկտին:

3.1.3. Ջրի փոխադրումն իրականացնել դրա պահման ու փոխադրման պայմաններին համապատասխան տրասնպորտային միջոցներով ու տարրաներով:

3.1.5. Անմիջապես տեղեկացնել Պատվիրատուին ցանկացած խնդիրների և ուշացումների մասին, որոնք կծագեն ծառայությունների մատուցման ժամանակ:

3.1.6. Կազմակերպել Ջրի փոխադրման համար տրանսպորտային միջոցի ու տարրաների պատշաճ հսկողություն, պարբերական ստուգում, որպեսզի դրանք համապատասխանեն ՀՀ օրենսդրության պահանջներին:

3.1.7. Պատվիրատուի վերաբերյալ չեզոքություն պահել, պաշտպանել նրա շահերը, երրորդ անձանց չհրապարակել Պատվիրատուի, ջրի փոխադրման սխեմայի, ծրագրի, ծավալի վերաբերյալ տեղեկություններ, որոնք համարվում են առևտրային գաղտնիք:

3.1.9. Տեղյակ պահել Պատվիրատուին հարկադիր ուշացումների և այլ անկանխատեսելի դեպքերի մասին, որոնք խոչընդոտում են ճիշտ ժամանակին փոխադրման իրականացմանը:

3.2. Պատվիրատուն պարտավորվում է.

3.2.1. Պատվիրատուին փոխադրումներից առնվազն մեկ օր առաջ էլեկտրոնային փոստի կամ հեռախոսագանգի միջոցով տրամադրել համապատասխան ծավալի ջրի փոխադրման հայտ:

3.2.2. Պայմանագրով սահմանված կարգով վճարել մատուցված ծառայությունների դիմաց մեկ ամսվա ընդացքում:

3.3. Կողմերը կրում են Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:

4.4. Պատվիրատուն պատրաստի ապրանքը ընդունում է Կատարողի պահեստից և տեղափոխումը կատարում է իր տրանսպորտային միջոցներով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում միմյանց հանդեպ Պայմանագրի պայմաններից ելնող իրենց չկատարած կամ ոչ պատշաճ կատարած պարտավորությունների համար:

4.2. Կողմը, ով խախտել է Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, պետք է առանց հապաղման ուղղի այդ խախտումները՝ տեղյակ պահելով մյուս Կողմին:

4.3. Կատարողը պատասխանատվություն է կրում ջրի ապահով, ժամանակին և ՀՀ օրենսդրությամբ ու տեխնիկական պայմաններով սահմանված պահանջներին համապատասխան տեղափոխման համար:


4.4. Փոխադրման ժամանակ ջրի աղտոտման կամ կորստի դեպքում Կատարողը պետք է Պատվիրատուին փոխհատուցի աղտոտված (կորսված) ջրի համար, եթե չի ապացուցում, որ վնասը վրա է հասել ոչ իր մեղքով կամ ֆորս-մաժորի հետևանքով:

4.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերը առաջնորդվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

4.6. Կատարողը պարտավոր է հատուցել Պայմանագրով սահմանված առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակելու կամ այլ եղանակով երրորդ անձանց հասանելի դարձնելու հետևանքով Պատվիրատուին պատճառած վնասները, ներառյալ բաց թողնված օգուտը:

5. Տորս-մաժոր

5.1. Կողմերը պատասխանատվություն չեն կրում իրենց պարտականությունների թերի կատարման կամ ընդհանրապես անկատար թողնելու համար, եթե դրանք հետևանքն են



այնպիսի հանգամանքների, որոնք Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխել հնարավոր միջոցներով, օրինակ՝ հրդեհ, տարերային աղետ, պատերազմ, ցանկացած տեսակի պատերազմական օպերացիաներ, պաշարում, ինչպես նաև տրանզիտային երկրների պետական մարմինների որոշումներ, այսուհետ՝ «ֆորս-մաժորային պայմաններ»:

5.2. Կողմը, որը չի կարողանում իրականացնել իր պարտավորությունը ըստ Պայմանագրի, պետք է տեղյակ պահի այդ մասին մյուս Կողմին ֆորս-մաժորային պայմանների ի հայտ գալուց 24 ժամվա ընթացքում:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

6.2. Այն դեպքում, եթե վեճերն ու տարաձայնությունները հնարավոր չէ լուծել բանակցությունների միջոցով, նրանք լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Պայմանագրի գործողության ժամկետը և դադարման հիմքերը

7.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ: Պայմանագրի ստորագրման պահ է համարվում այն կազմելու ամսաթիվը:


7.2. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի դադարեցնել սույն Պայմանագիրը՝ առնվազն մեկ ամսի առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

7.3. Պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում ունի իրավական ուժ միայն այն դեպքում, եթե այն կազմված է երկկողմանի համաձայնությամբ, ձևակերպված է գրավոր, և առկա են երկու Կողմերի ստորագրությունները:

7.4 Սույն Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

7.5 Կողմերի միջև ֆաբսիմելային և էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով ստացված փաստաթղթերն ունեն ստորագրված գրավոր փաստաթղթի ուժ, եթե դրանք ուղարկվել են Պայմանագրում նշված կապի համապատասխան միջոցներով (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն):

8. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային և այլ տվյալներ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<p>«ԱԿԲՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն Իրավաբանական և ծանուցման հասցե՝ ՀՀ, 3901, ք. Դիլիջան, Անդրանիկի վ. 2/27 ՀՎՀՀ՝ 07630825 Հ/Հ 1510051776227700 Բանկ՝ «Արարատրանկ» ԲԲԸ</p> <p>Տնօրեն Հարություն Գաբրիելյան</p> 	<p>«ՅՈՒՆԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն Իրավաբանական և ծանուցման հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Սարյան 26/2 ՀՎՀՀ՝ 02508347 Հ/Հ 1510032054170300 Բանկ՝ «Արարատրանկ» ԲԲԸ «Զարգացում» Ս/Ճ</p> <p>Տնօրեն Թադևոս Հովսեփյան</p> 